

Գիրքը յուսադատճեհահանվել է  
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՄԱՅՔ ԱՆՔՆՆՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՔ ՆՅՐԿՈՒՄՆԵ ԱՐԿԵԱՆ ԼՅՅԱՅԱՍ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ԼՈՒՄԻՆԱՏԻՎԱԿԱՆՆԵՆԻ ԳՐԵՐ:

Ք-ՍՅՑՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՐԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄՈՒԱՆ "ՇԱՄԱԼՅԱՅԱՎԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻՍԵՆ ԳՐԱՊՈՐՏԱՆ" ԿՈՑՔԻՑ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԵՆԴՐՈՒՄԱՆ ԵՎՐ, ՈՐ ԾԳՏՎՈՒՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ:  
ՑԱՆԿՈՒՄԻ ԵՎՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՔ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)



U. Konig




ՀԱՄԱՆ ԱՆՐՄԱՆԻՆ



Արամ Գրիգորյան

ԼԵՌԱՆ  
ՍԱՐՍՈՒՌԵ



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»  
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ 1981

ԳՄԴ 84 Հ7

Հ 847

**Հովեց, Մ. Մ.**

Հ 847 Լեռան սարսուռը: Պոեմներ և քա-  
նաստեղծ.—Եր.: Սովետ. գրող, 1981.—  
152 էջ, 1 թ. դիմանկ.:

Բանաստեղծի ստեղծագործության հիմնական  
թեման մտորումներն են կանքի, աշխարհի  
բարդ ու հակասական երևույթների, բարու և  
գեղեցիկի մասին:

«Լեռան սարսուռը» հեղինակի բանաստեղ-  
ծությունների չորրորդ գիրքն է.

Հ	<u>4702080 200 (592)</u>	—30—81 «Տ»	ԳՄԴ 84 Հ
	705 (01) 81		Ար 2

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1981

# ՍՏՎԵՐՆԵՐ ԵՎ ԼՈՒՅՍ



Խոհերիս գուլալ ակունքը խորիկ,  
Հանց կնճռաճակատ իմ ժողովուրդը՝  
Հի՛ն է, շատ հի՛ն է,  
Եվ աո՛ր է աույնքան,  
Որքան կապույտի անեզրությունից  
Երկիր առաքված լույսի խորհուրդը:

Հի՛ն է, շատ հի՛ն է,  
Ու աույնքան աո՛ր է դաշնումը երգիս,  
Որ երազանքիս անդրադարձման պես  
Մարմնավորվո՛ւմ է,  
Մի որոշակի տեսք է ստանում՝  
Նման այն շողին ցուլակն լուսնի,  
Որն ընկած նազուն

Աղջկա այտին լուռ խտիտ բերող  
Անձրևի փոքրի՜կ, փոքրի՜կ կաթիլում՝  
Խայտում է այնպես մեղմ ու հեշտագին:

Հի՛ն է, շատ հի՛ն է,  
Նույնքան և նոր է իմ համոզմունքը,  
Ինչպես կամովին ինքնախաբույր,  
Որ... Այդ այդպես չէ՛,  
Սակայն սրտիս մեջ  
Պահանջա՛ծի չափ խաբկանք է ծնում:



Թվում է արդեն իմ զորությանը  
Երկրպագում է այն պահը միակ,  
Երբ խոկումներս ու ընկրկումներս  
Համբուրվում էին,  
Թացվում կոպերս՝  
Խիճիճ գոչացած խոնավությունից:  
Թվո՛ւմ է... Մեկ էլ կարծելով արդեն  
Բռանս մեջ է  
Հավիտենության ահեղ վախճանը՝  
Ես ծառս եմ լինում օրերիս, մեկ էլ  
Անքնակիի գերհակության դեմ,  
Միայն թվո՛ւմ է...  
Բայց մտոք սթափ, երբ քննում եմ  
Օրերիս կապույտ հորիզոնների  
Բարդ միրաժները,  
Դե՛, ես էլ ստվերն իմ ժամանակի,  
Ուզեմ, թե չուզեմ...  
Մնում է միայն  
Տրորել նրա ոտնահետքերը:



Մի անափ երկինք,  
Լազուրում ամալի ճերմակ մի ծվեմ  
Ու հեռաստաններ վնիտ ու գերող,  
Հայացք մի թովիչ  
Ու շուրթե՛ր, շուրթե՛ր  
Բռնված անուշ կարոտի դողով:  
Ու սիրո ցողով աղբյուրված աչքեր,  
Մի խորունկ հավատ,  
Ու այդ հավատով մարդուն վստահել,  
Հոգին պատճեշել արհավիրքի դեմ,  
Ու ընդդեմ ելնել անսանձ հողմերին,  
Իրար զուգորդել ամպ ու փոթորիկ,  
Ահեղամոռուց ալիքներ ծովի...  
Եվ այս ամենը, և այս ամենը  
Իր մեջ է պահում  
Մի բռունցքաչափ սրտիս կեղևը:

## ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Գիշերը որպես համրացած մի  
տեղի,

Նստել է մահճիս,  
Ու կոպերիս տակ՝  
Տեսիլներ անգույն, անանուն  
ու պաղ,

Ստվերներ անձիր,  
երազներ խրթին,  
Ու սրտեր կրակ, ու խոհեր  
հուռթի,

Ու դողեր շուրթի, համբույր ու  
մրմունջ,

Ու իրարանցում,  
Տառապող հառաչ, խոռվք ու  
մաշում,

Ավար ու ավեր,  
Քրքիջ ու արցունք.  
Իրարու ներհակ՝  
Տանջված անցյալ ու տաշող  
Ժամանակ.

Եվ այս ամենը՝  
Համրացած մի տենդ՝ Քամր  
մահճիս մեջ:

## ՀՈՒՆՎԱՐՔ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես ո՞ւմ դիմեմ, ո՞վ տեր — արդ քեզնից բացի:

Ե. ՉԱՐԵՆՑ

Ինչպես կրկնությունը, որ կոփում է հոգին,  
Այնպես էլ մեղաավոր կամքը պարածածկյալ,  
Հար սուրբ է թվացել մեզ ու աստվածարյալ,  
Որ ելել ենք մենք հաճախ ընդդեմ մեր  
ոգուն...

Եվ զարհուրյալ այնպես մեր իսկ ձեռքի  
արով՝  
Արյունն ենք հեղել մեր, հանց մատղացու  
մի գառ,  
Եվ ծարաված խիճողով երազ ամռան համար՝  
Մեր հույս-ապակուն արցունք ենք բերել  
շնչով:

Անօգնական կանչով՝ մեղաավորի աչքում  
Զարհուրով գութ փնտրել մեր կորստյան  
համար,

Բայց մնացինք անօգ, անկարեկից դարձյալ՝  
Մեզ հետ բերելով մեր հաշմված Ոգին:

Նոքա՛... Ես ի՞նչ լեզվով պարզեմ նախնիրը  
մեր.

Արդ, նենգժոտ հոգին հանդուրժել ես չեմ  
կարող:

Եվ իբրև մի նոր վկա՝ նշտարիկ ձկան նման  
Նենգժատ ուկանում իր՝ զարկվում եմ  
կարեվեր:

Սակայն նեո հոգու դեմ նշողյուն իմ ոգին՝  
Նիրվանա աշխարհներ դուրս բերել չի  
կարող,

Վիճակիս նմանակ ու ելրում անկարող՝  
Աղոթեմ թող երկրիս ու կամքիս տոկուն:

Փառք տամ, որ դեռ կամ երկրում այս  
անեզրական,  
Եվ քե՛զ փառք ամենատես, ո՛վ սուրբ  
արարիչ,

Որ ձեռք մեկնեցիր մեզ և մեր գոյը վերջին  
Պատկանեցիր թեկուզ գնով մեր արյան:

Թեկուզ անխնայում այն՝ մահվան ու  
կյանքի,—  
Հարկավ, որ քրքիջը մեր՝ ողբ, տրտունջ  
դարձավ,  
Ու հոգեվարքի դռնից ետ վերադարձանք.  
Գոյատևումն իմ խորթ՝ դարձավ հավե՛րժ,  
անձի՛ր...

Եվ հիմա՛, կրկին վերածնված ոգով՝  
Եղյամն ենք հալում շնչով մեր հույս ապակու,  
Որպես արգասաբեր անապատում մի ցողուն՝  
Ծլարձակում ենք կրկին լուսո ալգաբացով...



Հուսամփոփիս կապույտ լույսը՝ կապույտ  
երազ,

Թներին է առել  
Անդորրությունն իմ տան,  
Խորունկ քնում սուզված՝ անմեղ երազի մեջ,  
Մանկանս շունչն է տաք:

Սակայն թանձր մութը  
Պատուհանին կառչած,  
Ասես չարն է կախվել թարթիչներից նրա,  
Ուզում է ներս խուժել...

Գիշեր է ուշ:  
Եվ այս երազի մեջ արթուն,  
Կորուստի մի սուկում աչքերում իմ քնատ...  
Ախ, թող լույսը, լույսը

Տեղի չտա ջարհն,  
Որքան կուզի մութը դրսում տեճդից դողա..  
Հոգ չէ, որքան կուզի դրսում մութը դողա,  
Ահ ու սուկում բերի աչքերին իմ հոգնած,  
Միայն չխաթարվի  
Եվ անվթար մնա  
Իրական ու արթուն երանությունն իմ այս:



Հողը վայրի էր,  
վայրի էի ես,  
Ու իմ բոցակեզ ժայռերի վրա,  
վարսերս քամուն,  
Ազատաձավալ պարս էր մոլեգնում...

Եվ հուլունքվում էր  
Անհոգ քրքիջիս արծաթ-շարանը,  
Երբ անվարժ ձեռքով պատկերս վայրի  
Գծեցի խոնավ իմ քարանձավի  
Պատերին մամռած՝  
Ու ճանաչեցի իմ ճմանակին.  
Առաջին անգամ տխրեցի մի լիչ,  
Քիչ-քիչ մարդացա,  
Նրբացա քիչ-քիչ,  
Նրբացավ երգս,  
Պարս նրբացավ,  
Ինձնից բարձրացա՛:

Ու բարձրանալու  
Շարժեց զայրույթը դժխեմ ցեղերի.  
Թխպեց երկինքս,  
Ու կարկուտ զարկեց հանդ ու ժայռերիս.  
Բայց աստված լռե՛ց...  
Եվ աստված լռեց դարե՛ր ու դարե՛ր...  
Ու երգս դարձավ անհուն թախիժ մի,  
Ու ձայնս՝ աղերս,  
Եվ պարս փոխվեց ծնկածեժ ողբի:

Ողբում էր անհույս սիրտս աղակեզ՝  
Տասնադյա տավիղ,  
Երբ հյուսիսից բորբ՝  
Իրականացած երազանքի պես  
Երկինքն ամպրոպե՛ց...  
Եվ հոգուս իջավ  
Եկարելու կարոտ բերկրանքը վսեմ:

Եվ ես ապրեցի՛...  
Խուկերս տված

~~Մ~~րևածագի հրաշք ծիրանուն,  
Կրկին բոցակեզ ժայռերիս վրա  
Հարատև ձայնիս  
Անդրադարձումն եմ լսում ես, սակայն  
Ձայնիս մեջ թաղած մի կտոր աղերս,  
Երգիս մեջ՝ թախիծ,  
Ու պարիս մեջ էլ՝  
Անվերժանելի մի խո՛ր տխրություն:



Թեթև էր այնպես իմ հոգին մսկուկ,  
Չնգուն ծիծաղս խաղիս ներդաշնակ,  
Ոտքերս բոբիկ հերկերում տամուկ  
Ու կյանքն էր շոշում իմ այտերի տաք:

Իմ երազների խառնարաններում,  
Թրծվում էր երգիս հրաշունչ ոգին,  
Միտքս արևի ցղանքին՝ տաքուկ  
Խիսդն էր դեգերում իմ շուրջը կրկին:

Եվ անցա մահ ու դավերի միջով՝  
Հայող հոգին իմ հավերժի խորքում  
Ռեռ ոգորում էր, մինչդեռ, զղջումով,  
Վախճանն էր մահի վիշտը ամոքում:

Ու կանգնեց երգիս ջահված տանարը,  
Բիվի տակ նրա աղավաատուն է,  
Խորանի առջև արդեն ոգեվար  
Մեղքերի համար մահն աղոթում է,  
Մահն աղոթում է,  
Մահն աղոթում է...

## ԻՄ ԱՇԽԱՐՀԸ

Երբ առավոտի շողն արեգակակ  
Կաթում է բարձիս,  
Ու լեռան կողին ամպն է շիկակում,  
Երբ առվակն է իր արծաթ պարանր  
Կախում ձորակի ճաքած պտուկից,  
Կոպերիս ներքո  
Բնությունն իր իսկ պատճենն է հանում:

Երբ զուգորդվում են շրթունք ճաքճքող՝  
Զմեռն ու դողը,  
Հրճվանքը սրտի, երբ տեղն է գիջում  
Մտահոգումին,

Արցունքները զույգ՝ խիլոյի ու վշտի,  
Բախվում են իրար,  
Այնժամ իս հոգում՝  
Կյանքը գտնում է արտագուումն իր:

Երբ համոզմունքիս բախվում է հուժկու՝  
Շրջափակ հոգու արձագանքը խուլ,  
Մեկանն է դառնում աշփու դեմ մլար,  
Ապա սրտիս մեջ,  
Ասես աշխարհը մի բերանի դառած՝  
Ողբում է դեմքն իր կողոզնելու համար:



Է՛հ, ի՞նչ արած, թող կոչեն ինձ անհոգ,  
Չգիտեցալով, որ ժպիտս տաք  
Նման է շողի՞ն արևագալի:

Երբ ծիծաղում եմ,  
Կամ քրքջում եմ երբեմն անզուսպ.  
Կարծում եմ կյանքն իմ կողքով և անցնում:

Իսկ թե ամպում եմ՝  
Մարդիկ գիտե՞ն, որ  
Ամպրոպի շեղքը ներսումս եմ թաղում  
Ու անձրևը հորդ տալիս եմ իրենց:



Լույսն արեգական  
Ըմբռշխնեց մեկեն երկնի կապույտը,  
Կյանքը քայլ առալ,  
Ու հոգիս ապրեց իր արթնացումը:

Որպես հատուցում՝  
Խորին գիշերվա սուկումներին խոլ,  
Արփին է հղում դյուրանքն իր հեշտին.  
Նազանքով թեթև ու գալար-գալար  
Ամպերն են սահում՝  
Աղջնակի պես շիկնանք շուրթերին,  
Ինչպես որ էին  
Տարիներ առաջ՝ անձրևից հետո:

Տարիներ առաջ՝ անձրևից հետո,  
Աչքիս մեջ խոչանք ու ոտքերիս ցող,  
Մի պատառ երկիր,  
Ու գլխիս վերև մի լազուր երկինք,

Ու հազար տեղից կարկատած ջալվար,  
Սակայն բախտավոր...

Նույնքան տարաբախտ,  
Ու թախծակույտակ մի անմեղություն,  
Դաջված որբություն,  
Մի արթուն երկինք,  
Ու գոցված դռներ՝  
Մայթերում մաշվող պատանեկություն:

Ապա այրացած մի ջահելություն,  
Մի ողջ խորություն,  
Ու իմաստնացած մի խոր ծերություն՝  
Կլանքը ըմբռնչվող ջահելության մեջ:



Ու խոնջացած մարմնին հանգստություն  
իջավ՝

Լուսնի հայացքի տակ:

Լուսնի հայացքի տակ՝ հեճց պաղ մայրի  
վրա,

Այն անպաշտպան տղան իմաստություն  
գտավ:

Գրքեր, գրքեր, գրքեր լաբիրինթանուման,  
Խորախորհուրդ ու թանկ, կախարդիչ ու  
գերող,

Գրքի ծովում տղան ինքն իր դեմքը գտավ,  
Այն բոկոտն տղան:

Քուրաչում խոհերի՝ մոռացած ինքն իրեն,  
Եվ օրենք, և աստված.

Ընկած լիր լուսնի պաղ, անաղմուկ  
շնչի տակ,

Որպես խուլ մի հառաչ,

Մի անեծք խտացած,

Մանչուկը անամոք՝

Արարող է նա արդ,  
Խորհուրդների խորքը իմաստությունք հաշող  
Կնճռանակատ մի այր:

Կնճռանակատ մի այր... Սի՛րտ իմ,  
հանգի՛ստ, հանդա՛րտ,  
Ի՞նչ ես զարկում անհաշտ, վերջին  
ակորդդ ջէ,  
Ի՞նչ ես գուժում դու արդ...

Ահ ո՛չ, արարողդ երկտակվել չես կարող,  
Ու ինքդ քեզանից չե՛ս կարող օտարվել:



Եվ մենակյացի տառապանքի պես,  
Որպես մի մղում խեղված Այարդերի,  
Թաղվում եմ անլուր  
Ու հալածական  
Իմ մտորմունքի սահմանների մեջ:

Լսում եմ ասես  
Հեծեծանքները հոգևած ջղերիս,  
Որ ցնցումներ են աննկատ բերում  
Կնճռապատ հոգուս,  
Բայց ո՞ւմ, ասեք, ո՞ւմ,  
Ո՞ւմ առջև բացեմ սրտիս խոռվքը,  
Ո՞վ կհասկանա քառսը կյանքիս,  
Երբ տնօրենը երկդիմությունն է

Այն մե՛ն ու միակ ջրացնցուղի,  
Որ պիտի մաքրի խոտորումներս,  
Ու բեկումներս...  
Եվ մենակյացի տառապանքի պես,  
Որպես մի մղում խեղճած Այարդերի,  
Թաղվում եմ կրկին  
Իմ մտորմունքի սահանքների մեջ:

## Ի ԽՈՐՈՑ ԼՌՈՒԹՅԱՆ

Թեկուզ լռությամբ... Սակայն և գիտեմ  
Կարողությամբ իմ ինչ-որ թախծություն,  
Ինչ-որ ծանրություն տանել աներկբա.  
Գիտեմ և վանել գիշերը մաղձոտ  
Ու մի բաց սրտով կրկին մաճկանալ,  
Սառնորեն ժպտալ՝ ինձ հաստատելով:  
Եվ կիզվել գիտեմ,  
Գիտեմ և կիզել,  
Ու սրտանց կիսել նույնիսկ օտարի  
Գոլ արցունքների աղիությունը,  
Գիտեմ և խնդալ ամենքի նման  
Ու ամենքի հետ՝  
Նույնիսկ քրքջալ ինքս ինձ վրա,  
Քրքջա՛լ... Սակայն, իմ իսկ սեփական  
Քրքիջի մեջ էլ հաստատելով ինձ:

## ԶՐՈՒՅՑ ՍՐՏՈՎ ՀԵՏ

Բախաստեղծի հոգու միջով անցել է  
աշխարհի ճեղքվածքը, և նա դա  
կամայել է իր ժամանակի հատ-  
կանիշը.

ՀԱՅՆԵ

Վու, որ երբևէ քննել ես մահը  
Ու հեծկլտացել,  
Կուշ եկել բախտի քամհարումից խորթ,  
Կով ու սոսկումից,  
Հույս ու լքումից,  
Դ՛նկրկումներից հոգնատանջ մարմնով,  
Ու թզկտումից առավել մեռած...  
Կակայն մղումից մի անչափելի՝  
Կույ-որ դաշնության հասնելու ճիգով,  
Վույնիսկ չգործած մեղքերիդ համար,  
Դ՛նկել ես խրթին երկվության միջև.  
Ընկը՝ երկդիմի, մյուսը՝ գերող,

Մեկը լուծընկեց, ու մյուս՝ աղնատ,  
Մեկն՝ աստվածային,  
Մյուսը՝ անյնքան մոլեգիճ ու ժակտ,  
Ու ամեն մեկը՝ իր հերթիճ լկող,  
Կոկորդո բռնած՝  
Հորձանք եւ տալիս ընդդեմ իրարու:  
Իսկ դո՛ւ, գոնե դո՛ւ՝  
Քո կողմից անձիս հասցրած այդչափ  
Տանջանքներից խոլ,  
Չես շիկնում մի պահ...  
Ու դեռ անսքող,  
Նետվում ես մարտի՝ հանուն

դաշնության:

Մինչ գլխիդ վերև առավել սաստիկ՝  
Շուրջպար են բռնել կրկին անդաշն  
Երաժշտության հնչյունները գորշ:



Աչքս չի տեսնում կյանքիս կորուստը,  
Ինչպես չի տեսնում  
Անկումն իմ հոգու այն իմաստունը,  
Որ քննել գիտի ակնթարթը վեհ,  
Որի ընթացքում հանճարն է սերվում:

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է...

Իրողությունն է,  
Ինչ-որ կերպարի  
Այնպես քահանա գահավորությամբ,  
Եվ գույնն է փոխվում ողջ ժամանակի:

Ու ճշմարտության  
Ոգին միգամած ոլորտում խրված՝  
Ցնցոտիներն է կարկատում իրար,  
Որպեսզի ծածկի մերկությունը իր:

## ՏԱՊԱՆԱԳԻՐ

Եվ սա է վերջը ով կուգես եղիր.  
Մի անշուք տապան,  
Որը սկիզբն է անցողիկ կյանքի  
Ու հիմքը նաև հավիտենության:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբեմն ինձնից հեռանում եմ ես  
Ու զննում անձս  
Մտոք ստեղծած վայելքների մեջ:

Եթե կամ, երբեք թող չգիտակցեմ  
Անկումն իմ հոգու,  
Որը կլինի առավել ծանր,  
Քան կործանումը:

Եվ հոգսերով իմ,  
Որպես մարդկային  
Ցեղիս լիիրավ շարունակություն,  
Որպես ճանաչումն իմ արյան եռքի,  
Առանց որևէ խղճահարության  
Ուղարկեմ թող ինձ  
Քարանձավներում ճգնափորության,  
Կամ թեկուզ կարգեմ  
Ժայռափորիչի դժվար արհեստին:

Եվ թող չհմանամ հաշիվն օրերիս,  
Հավերժության սաղ կապանքների մեջ  
Ազատության գոլ հույսերի շղթան  
Թող որ կորցնե՛մ...

Ինձ բավական է պահն էլ երկունքի,  
Որի ընթացքում  
Հաճախ իմ անձից հեռանում եմ ես,  
Տանում լուսավոր միայնության մեջ՝  
Տենդոտ ու խրթին տառապանքներս:



Մոայլ ամպերը, անտուն ու թափառ,  
Ուզում են լուսնի տեսքը քողարկել  
Ու լուսնի փայլով իրենք երևալ,  
Ի՞նչ հիմարություն...



Ես քավդեար չեմ:  
Եղ ոչ էլ աճա  
Հորդանանի հուր ավազուտներին  
Տված ճգնավոր,  
Որ սրբագործվի մեղսավոր հոգիս.  
Օ, ես ատում եմ նման սրբերին:  
Նամ մարդկանց խիղճը ճնշելու համար,  
Որ նվաճելու  
Նորանց հավատի խորխորատները՝  
Խաչ չեմ բարձրանա.  
Ես նոր հիսուս չեմ,  
Իկ երեկվա սուրբ  
Ստովածահանն այն մանուկը խեղճ,  
Որ չի ճանաչել օրենք ու աստված.  
Քառասպատանջյալ մի այր է հիմա,  
Սր մի ներքնախույզ՝  
Երկվության միջև սիրտը բաժանված.  
Նման այն ճեղքված ատումին փոքրիկ,

Որի կեսը լույս ու կյանք է քերում,  
Իսկ մյուսը՝ մահ...  
Եվ ո՞րն եմ հիմա,  
Դժվար է ասել.  
Երկու դեպքում էլ խիստ քանոյություն է  
Եվ քննողն եմ, և քննվողը,  
Ինձնում զուգորդված արևն ու դուր  
Գոյատևում եմ՝  
Հոգիս խոհերիս հրդեհում կիզմանի:  
Ու ամեն վայրկյան և՛ այս և՛, և՛ այն՝  
Նայած մոտեցման:

## ԿԱՅԹԱԿՂՈՒՄ

Եվ ինչքա՛ն էլ թույլ լինի Աեցուկը  
Իրականության,  
Որքան երկդիմի,  
Նվազ հուսատու,  
Խաբուսիկ, ինչպես  
Օվկիանի մթին անդորրությունը՝  
Կհառչեմ նրան  
Իմ վերջի՛ն, վերջի՛ն ջղաձգումով.  
Ու կապավինե՛մ,  
Կշղարշեմ այն երազանքներիս  
Թույլ արձագանքի գայթակղումով:  
Թեկուզ և խաբված  
Իմ սուրբ նախահոր՝ Ադամի նման,  
Կերկրպագեմ հողին այն զառամ,  
Այն արարողին,  
Որ շնչավորեց հավերժահողով՝  
Կյանք կոչվող խորին այս պարադոքսոս,  
Ներկայացումն այս իմաստախոհիվ,  
Որի ողբերգակ դերասանն եմ ու  
Թերևաբարո հանդիսատեսը:



Անկարելի՞ն...

Ես չեմ ասի, թե հրդեհը դառձա մեկն  
Լուսնի ցոլքում պարող սառույց,  
Ու սառույցն էլ սիրո կարոտ ակառօցներին  
Խտիտ քերող հեք ու շշուկ:

Ամենագոր իմ բաղձանքը կատարյալն է,  
Որի ստույգ արարողն հեճ  
Ինքը՝ մարդն է,  
Որն անքննին սրբությանը անվանարկում,  
Եվ մեղա տե՛ր... Պատահական

Գլխին դնում լուսապսակն աստվածային:  
բախտախնդրի

Եվ դա քի՛չ է՝  
Պահանջվում է,  
Որ քրիչի փոխվի մեկեն ցավիդ ճիչը,  
Դեռ չխամրած,

Զատում ղէո,

Սանձլի Աույնիսկ երակներիդ արչո՞ւնը ջէո:

Երազաժս մի մեծ բան չէ,

Թող մարդն ինքը գոնե մի պահ

Սանգնի իր դեմ

Ին անաշի ինքն իրեն,

Ին մարդանա՞,

Ին բարձրանա ինքն իրենից,

Եւ ևոր վերից քննի միայն

Կշուպթն իր իսկ անանակի:



— Հանձնվի՛ր հրին ողջակիզության...  
Հեշտ է սուկը,

Նույնիսկ խոսե՛լը...

Ամոթ է նույնքան,

Որքան ամոթ է

Գործած մեղքերիդ թողությանն համար  
Խաչակնքե՛լը...

Խաչակնքի՛ր դու, որքա՛ն որ կուգես,

Սակայն չգործած մեղքերիս համար

Մի քիչ մարդացի՛ր...

Ու մի՛ հանձնիր ինձ խաչելությանը:



Ինչպես գալիքի երազատեցնող  
Հարթած պատանի,  
Երկնքի կապույտ անհունի միջով,  
Լուռ ու սիրավոր՝  
Սահում է լուսնի հայացքը մոլոր:

Ու նրա առջև  
Ուռիճ է մտել հարսնեպարը իր՝  
Ծորորում հուշիկ ու համաշափաղ,  
Այնպես ամոթխած տարուբերում է  
Կանաչ զգեստի դարսերը ծալ-ծալ:

Այսքանն է հիմա  
Իմ ունեցածն ու չունեցածը ողջ՝  
Մի հայացք լուսին,

Ու կանաչաձալ շրջազգեստում  
Իր հարսնեպարը մտած ուռեձի,  
Որ մեկնության պահին այս աճձուկ՝  
Բեկվում են հոգևած իմ աչքերի մեջ  
Ու կյանքով լցնում  
Շրջափակ հոգուս անձավը տամուկ:



Հոգեվարք, մի հուսախաբի,  
Ու երազի խրախճանքում  
Ինքնամոռաց մի սրտի խինդ,  
Հոգու թրթիռ,  
Եվ այս երկու հսկաների  
Պայքարից լոկ կյանքն է ծորում  
Հարատևումն իմ գոյության:



Տեսե՛լ ես մահը...  
Որ աներևույթ  
Ու աննյութեղեն,  
Արդ, շրջում շուրջդ,  
Զուլվում է քեզ հետ,  
Ու սրտիդ ամեն գոյություն զարկով  
Քննում է անձիդ և՛ կան, և՛ չկան:  
Տեսե՛լ ես, ինչպես  
Կոկորդից բռնած՝ հուսալքվածի  
Նյարդերն է քամում  
Ու կայծակնահար  
Գետին տապալում դարավոր կաղնուն,  
Մեխում ժանիքն իր արծվի թևի տակ,  
Առյուծին հզոր կերակուր դարձնում  
Տամուկ անձալի որդ ու ցեցերին:  
Տեսե՛լ ես, սակայն,  
Երբ խցում քարե,  
Մազերը՝ խոիվ ու ձեռքում՝ փետուր,

Այր մի հանճարեղ՝  
Հոգու հախտուն մի պոռթկումով,  
Սպառվող մոմի լույսի տակ դեղին  
«Մատչա՛նն» է երկնում,  
«Մատչա՛նն» է երկնում... Ու մոմն անխռով՝  
Արցունքն իր վերջին  
Թողած գրոտած թղթերի վրա,  
Հանդարտ մեռնո՛ւմ է...  
Ո՛ր է, թե՛ նման մահ ունենալի:



Օ, ցրի՛ր տագնապնէրը հոգուդ, օ, ցրի՛ր  
Ու փորձիր նախ կիսով հաստատել ինքդ  
քեզ,  
Ինքդ քեզ հավատալ ու զգալ, և ապա  
Հավատիդ բոցերում նո՛ր եղիր ողջակեզ:



Գիշերվա մութով՝  
Որպես մայրիկիս գոգնոցով ևև-սաթ,  
Աչքերս եմ փակում,  
Եվ հետո՛ւ անդորր  
Ծաշակում եմ ես  
Տեսիլքախոիվ մի երազաշարք:

## ԶԱՐՄԱՆԱԿԻ Է

Հանախ ժպտում եմ,  
Ժպտում ինձ վրա,  
Որ ժպտալ գիտեմ,

Որ խղճա՛լ գիտեմ,  
Կուզեմ ետ պահել մի ֆելիստերի  
Իր սովորույթից:

Ծայր բարությունից աղոթե՛լ գիտեմ:  
Գիտեմ և տխրել,  
Թախծել կործանվող աչև հոգու համար,  
Որ որոգայթ է լարում սրտիս դեմ.

Զարմանալի՛ է:

## ԱՌԱՆՑ ՇՇՈՒԿԻ



Մատեներիդ նման՝  
Մազերիս միջով անձրևն հակիճիթե,  
Շոշկով դեմքս՝ ձգվում է ի վար,  
Ու պարանվել է ձեր պատուհանից  
Լույսը սենյակի՝  
Իջել ուներիս, մինչև ոտքիս տակ,  
Որ ինձ տանի վեր.  
Բայց... Լույսը մարե՛ց... Ի՞նչ խաղ է, ասա՛...  
Ինձանից տեսքդ մթության քողով  
Ծածկելո՞ւ համար,  
Թե՞ քեզ թաքցնելով՝  
Այնպես համարձակ նայես ինձ վրա:

## ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Ես պարսավված իմ իսկ կողմից  
Ու խղճիս դեմ դու անպարսավ,  
Ես՝ հեծություն մի անպատիր,  
Դու վախճանն իմ տառապանքի:  
Ես՝ տքնություն, ես՝ վախ ու վիշտ,  
Եվ իմ հոգուն դու՝ քավություն,  
Դու՝ այցելու մեճակյացիս,  
Ես՝ տիրամոր խաչակնքում:  
Ես՝ փորձություն, դու՝  
դատաստան,  
Դու՝ անդաստան տառապանքիս.  
Այսպես արդյոք ո՞ր  
կհասնենք,—  
Իրար ներհակ ու բարեկամ:



Աչքի կոպի՛ն՝  
Ինչ-որ հույսի հանգչող մի շող,  
Իրար սեղմած ատամներում՝  
Աղջկական քամվող զայրույթ,  
Ու դողացող,  
Ու դողացող  
Զույգ ձեռքերի ձգված մատներ,  
Որ պատռում են ինչ-որ մեկի...  
Մի ժամանակ իրեն համար  
Այնքան անուշ նամակները:  
Պատռո՛ւմ... Իմ սեր, քեզ հիշելով,  
Մեկ էլ ձգված շրթունքներիդ՝  
Կապարացած լռությունը,  
Սիրտս է քամվում  
Նրա ճերմակ բուռնցքի մեջ:



Մ'իթե քեզ գտա,  
Որ մոլորվեի հոգուդ **անձավում,**  
Զրկեիր սիրտս, **էութունս ողջ'**  
Այլոց սիրելու,  
Սիրով տրվելու **սուրբ իրավունքից.**  
Ու քո կորուստով  
Սնանկ թողնեիր **գանձարանն** հոգուս..  
Մ'իթե քեզ **գտա** կորցնելու **համար:**

## ԽԱԲՎԱԾԸ

Քաչըն՝ւմ է...

Եվ իր քաչերից երեր,

Ծարժումից հանդարտ

Ու ամե՛ն, ամե՛ն կոպի թարթումից՝

Աղջկակաճնն անոր թախիժն է ծորում,

Ու անրանում է

Հոգու դառնահեամ մտահոգումը:

Քաչըն՝ւմ է... Սակայն իր խոկումի դեմ

Որպես դեղատոմս,

Էժան ժախտն է վաճառքի հանում

Անց ու դարձողին:



Այնպես հասել է, հասել գիշերը  
Ու ժամն է տարի,  
Սիրտս քեզ հորից, հորից հիշել ի՛նչ  
Կանչում է՝ արի՛...

Չկա ոչ մի շունչ, անդորր է տիրում  
Գիշերում այս սև,  
Ախ, միայն ես եմ անքում ու տրտում,  
Մեկ էլ սիրտս՝ խն:

Քո սրտում է հար միտքս անմեկին  
Անվերջ դեգերում,  
Մեր անցած ու հին հուշերն է կրկին՝  
Հիշո՛ւմ, քրքրո՛ւմ:  
Պատրանքնե՛ր էին, խարուսիկ երա՛զ  
Խոստումները քո,

Համբույր ու խոկում՝ լուսնկա ու պարզ  
Երկնքի ներքո:  
Ավաղ, այն օրից որքա՛ն է անցել,  
Քանի՛ ձեզ տարի,  
Սակայն սիրտս քեզ դեռ չի մոռացել,  
Կանչում է՝ արի՛...

## ՊԱՏՐԱԿՆՔ

Դու ինձ տրվեցիր, որպես անհատնում  
Մի անուշ վայելք՝  
Սիրո պատրանքի և իրականի  
Սահմանում ընկած:  
Որպես մի հեռո՛ւ, հեռավո՛ր կարոտ,  
Եվ այնքա՛ն, այնքա՛ն, և այնքա՛ն մոտիկ  
Ու շոշափելի՛...  
Սակայն ես անմիտ, միամիտ եղա  
Ընորհներիս ու հաշվումներիս մեջ,  
Որ ինձ հասցրեց ծա՛յր թշվառության:

## ՀԱՎԱՏՍ

Քեզ ունենալ, դա նույնն է, թե  
Կրկին տիրել արտիս խլված,  
Հոգիս փրկել  
Քո լոռության կապանքներից:  
Ու անորոշ դրությունն  
Կողմնորոշել  
Քո լարդաթերթ մի ժպիտով:  
Քո կաթնծիր խոսքաշարով  
Դուրս արձնել  
Մթնաբավիղ իմ այս ուղուց.  
Ու ազատվե՛լ... Բայց հավատս...  
Հոգեվարք է ապրել վաղուց:



Ինքնամոռացման իմ կարճ գիշերներ,  
Հուշեր իմ միակ,  
Սիրո իմ հույզեր  
Ձեզ չեմ մոռանա:  
Ու չեմ էլ կարող վանել ինձանից,  
Երբ մենք ձեր գրկում  
Ու նա գրկիս մեջ.  
Իրար խառնելով  
Մեր սրտազարկի ձայները երկու՝  
Լուռ անթեղեցինք  
Ձեր կապո՛ւյտ, կապո՛ւյտ լուրջան խորքում:  
Ու սիրտս է զարկում,  
Բայց զուր է, իմ խենթ.  
Գուցե հետքը քո  
Նրա հուշերում չի էլ մնացել,  
Սակայն ես երբեք ձեզ չեմ մոռանա,  
Դուք իմ գաղտնապահ ու կարճ գիշերներ:



Դու գնո՞ւմ ես:  
Ափսո՞ս...  
Ափսոսելու արդեն զուր է,  
Սպասելու իզո՞ւր, իզո՞ւր...  
Չէ, անզոր եմ,  
Էլ չեմ կարող քեզ ետ քերել  
Սիրարթուրով գինովցածիս  
Կանչերը խեղճ,  
Քանզի դու այդ չես ցանկանում:  
Բայց ի սեր մեր գիշերների՝  
Հիշիր, որ կամ,  
Միշտ քեզ մոտ եմ,  
Եվ օրերիդ  
Անմե՞ղ, անմե՞ղ տխրության հետ:

## Ծ Ա Վ Ա Լ Վ Ո Ղ Կ Տ Ա Վ

ՀԱՎԵՐԺԻ ՎԿԱՆ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

(Նախերգ)

Օ, դուք հեթանոս նախնյաց աստվածներ,  
Դուք բազմահեծան հավատ սուրբ հոգու,  
Դուք իմ նախահոր պաշտամունք խորին՝  
Կուզեմ ես պարպեմ երթը ձեր ոգու,  
Որպես մի գավաթ,  
Կուզեմ և չքնաղ Արուրամիի շուրթերից

կորզել

Ժպիտն այն միակ,  
Որ պահված էր քեզ, ով Խալդ միահեծ,  
Շշուկը նրա,  
Որ լոկ քեզ համար և՛ սուր, և՛ սուս էր,  
Չար անդաստանում արդար դատաստան:  
Կուզե՛մ, կուզե՛մ, որ հոգին իմ խեղդել՝  
Հաղթ Թելչերայի փոթորիկներում

Ու սիրտս կիզել՝  
Օվհիհիհի բորբ արևի հրով:  
Կուզե՛մ, ախ կուզե՛մ եղած ու շեղած  
բոլոր աստվածներ՝  
Ձեր երթը պարպել որպես մի գավաթ  
Ու իմ նախահոր կյանքը հեթանոս,  
Հյուսել ձեր շնչով հեթանոսական:

#### ՀԵԾՅԱԼԸ

Տապից պապանձված՝  
Ճաքճքված գետնից  
Տոթն էր հառնում վեր,  
Ու նահանջում էր հորիզոնն ասես  
Մի գուսպ շշուկով.  
— Արքա՛ն է գալիս...  
Ու սարը սարին  
Սեսես փսփսում մոգական բառեր,  
Ու խեղդում էին իրենց ձորերում՝

Արքա՛ն է գալիս...  
 Արքա Արգիշտին՝ տերը Բիայնո,  
 Որի սուրն ահեղ  
 Սարսեց երկիրը Դիաուխինի,  
 Սարսեց խեթական պարիսպները կուռ,  
 Մաննան ու ոգին մեծ Միջագետքի.  
 Հողը Պարսուա,  
 Ուր խոլ դոփել է ճծույզն Արգիշտու:  
 Ո՛ւր... Ու մարմնում իր, երակների մեջ՝  
 Կրկին եռ եկավ արյունը իր ջեռ,  
 Կրկին վարարեց միտքը արարման,  
 Կրկին... Ու մի պահ վարանեց արքան.  
 Մի հայացք ձգեց մոտիկն ու թեռուն,  
 Ուր եկել էին խառնվել իրար՝  
 Տիեզերքն ու երկրի կեղևը:  
 Ո՛ւր... Ու փռուացին ոունգերը ձիու՝  
     բլուրի վրա,  
 Ապա շողացին աչքերը նրա՝  
     ցամակությանը հղի.  
 Մղումից էի արքան ցնցվեա՛

Ի՞նչ էր այն, երա՞գ...

Ասես աչքի դեմ

Սանգնած էր արդեն բերդաքաղաքն իր՝

հզոր պարիսպով,

Ապա հեթանոս հնչյունների տակ,

Իր զորքն էր տարվել

զինավարժությամբ...

Եվ հաջորդ պահին՝

Կոկորդաքեր ու դիվահար կանչն է

եղջերափողի...

Ու թարտացին ոսոխները իր՝

Բերդից մարտադաշտ նետվող քաջերի

հուժկու հարվածից:

Սա գուցե, գուցե մտացածին է,

Գուցե և այնպես չի եղել սկիզբ,

Սակայն ստույգ է, որ նախնախնայրն իմ

Կոչեց հաղթանակ:

## ԳԻՆԱՐԲՈՒՔԻ ԳԻՇԵՐ

Գիշերը այնպես  
արճաացել էր Տուշպայի վրա,  
Բայց միջնաբերդում՝  
Երկհարկ շինության պատուհաններից  
Դուրս էին ծորում  
Պարզ հնչյունները հեթանոսական,  
Եվ թնդում էին բյուր ոտնաձայներ՝  
Հեթանոսական ներդաշնակ պարի:  
Ու արքան արի՝  
Թունդ գինարբուքից աչքերը կրակ,  
Նորից պարպեց իր եղջերաթաւր,  
Կրկին մոայլվեց:  
Ու ասես, ասես աչքերի առջև  
Մոնվեցին հանուր  
Այունաշարերը հսկա շինության,  
Եվ ամեն մի քար  
Ու որմնանկար  
Արքայի գլխում  
Խուլ գուշում էին միայն հաղթանակ...

— Ա՛հ,— խորհեց արքան, տերը Բիայնո,  
Ու քաջակորով զավակը նրա՛  
Մեծ Մենուայի,— Խալդի մեծությամբ,  
Զորությամբ հզոր Արուբանիի,  
Ու ամենազոր բյուր աստվածների  
ամբողջ զորությամբ՝  
Կառուցեցի եւ Արգիշտիխիւնը.  
Ու հզորությամբ Բիայնիլիի,  
Եվ անագորույն ոսխաներին իմ  
Երկրիցս հեռու վանելու համար՝  
Կամոքն Խալդի,  
Պե՛տք է բարձրանա բերդաքաղաքն իմ,  
Ու գինարբուքի գավաթն հաղթության  
Պիտի եւ պարպեմ  
պարիսպների մեջ,  
Կամարների տակ  
Էրեբունիի:

## ԱՐԵՎԱԿԱՍ

Ո՛րք արևագալ,  
Ո՛րք դու արշալույս,  
Թող խմեն խորին խորհուրդը՝ քո սյառ,  
Թող ոգին ծպտյալ քեզ շխաթարի,  
Թող քեզ վահանեն  
Ու սատար լինեն բռնկումների  
Հեթանոսական իմ վեհ նախահոր,  
Բիայնիլիի աստվածները բյուր...

Ու արքայի կուրծքն էր կիզում մլում  
մի ջերմ,

Ու եոք գալիս,  
Ու խոյացող արծվի մման թռիչք գործում,  
Եվ ամեն մի տեղադրվող  
Խին ու քարի հետ էր խուսում սիրտը նրա:  
Սիրտը նրա հենձակվում էր  
Եռապարիսպ միջևաբերդի ամեն քարով,  
Հենապատով նոր բարձրացվող,

Նոր հիմք դրվող աշտարակով,  
Որմնանկար սրահներով քաղմախոսուն.  
Արքայանիստ ու տոնական դահլիճներով,  
Ու ամեն մի վսեմակերտ նոր շինությանմբ՝  
վեհանում էր հոգին նրա.

Ծափուղ տալիս,  
Ապա... Սակայն անդորրվում էր,  
Հանգրվանում սրահում մեծ՝  
Տանիքի տակ մեծ տաճարի,  
Ուր որ պիտի զոհ մատուցվեր  
Առյուծասանձ աստվածներին:  
Ու պատերից որմնանկար՝  
Կենաց ծառը՝ շրջապատված ոգիներով  
Հո՛ւլ աներ, հո՛ւլ...  
Հետո, հետո երեք տասնյակ  
հաղթ սյուներին

Դրվեց երկթեք տանիքն հսկա՝  
Երկհարկանի մեծ շինությանն:  
Հետո Սուսի, Արուբանու,  
Ապա մյուս աստվածների,  
Ամենատես Խալդ աստծու

Տաճարների հիմքը դրվեց.  
Ու կանգնեցին մարդաբնակ **հյուսակները**  
Երդիկներից՝ աղոթքի պես,  
Ծուխը ելավ մինչև երկինք,  
Մինչև երկինք պարը թնդաց,  
Երգը ծորեց,  
Որպես շունչը իմ նախահոր,  
Եվ որպես մի համեստ սկիզբ:

### ՏԵՆԴԱՅՈՂ ԴԱՐԵՐ

Տնքում էր տարին,  
Ապա տեղնագին  
Դարերը հերթով իրար հաջորդում,  
Ու մութ ամպերից սև թոն էր կախում  
Բիայն գլխին.  
Բիայն ոգին նոր էր ծիլ տալու,  
Նոր էր ծաղկելու,  
Կենաց ծառը նոր պիտի ծանրանար,  
Սակայն ճղատվե՛ց...  
Եվ աստվածները անգոր համրացան:

Դեռ ծխում էին տանիքներն անլուր՝  
Հյուղ ու տաճարի,  
Ու սկյութական բաբանի թափից  
Դեռ դողում էին բերդ ու միջնաբերդ,  
Երբ վայրագաբար՝  
Մարերը ելան Բիայնո վրա.  
Օ՛, բաց աչքերդ, արքա Արգիշտի:  
Ո՛վ ամենագոր՝  
Տքնությունդ, որ մինչ երկինք հասավ,  
Ու խոնարհվեցին քո գահի առջև  
Աստվածները բյուր,  
Ինքնությունը քո դառնում է փոշի.—  
Ա՛խ, բաց աչքերդ, հզոր Արգիշտի:

Ու Երևանը,  
Այսինքն՝ սրտում հառաչանք սեղմած  
քո Էրեբունին,  
Սասանյան ճանկում,  
Ինչպես մի թռչուն երախում վայրի,  
Այրում հոշոտված եղնիկի նման,

Ու աչքերում վիւ,  
Դեռ ցաւն էր մայում,  
Երբ հագարական հորդաները խն  
Նորեցին վերքը դեռ չսպիացած:

Սելջուկ դահիճն էլ՝  
Մի հոր էր փորում այնպես  
տենդահար,

Դեռ տաք մարմինը թաղելու համար.—

Ախ, կանչս լսիր, ո՛վ ամենակալ...

Այսքանը քի՛չ էր...

Եվ Շահ-Աբասը՝

Բռնակալը չար ու անգաբարո,

Խեղդեց մոր ճիչը երկունքի պահին,

Թրատեց իր իսկ խանձարուրի մեջ՝

Մանկական անմե՛ղ, անմե՛ղ քրքիջը.

Ու մնացածն էլ՝ մի բուն ժողովուրդ,

Տեղահա՛ն արեց...

Այդ պահին էր հե՛նց,

Շեշտակի եկալ ավետիսն հուսո...

Ու Երևանը,  
Այսինքն սրտում հավատ անթեղած  
քո Հրեբունին,

Մի կանթեղ արած աչքերը հույսի,  
Հայացքը հառեց նա դեպի Հյուսիս...

Ու լուսեղ այնպես,  
Հարատևորեն ու այնպես որոշ,  
Միգամած երկնի կնճիռների մեջ  
Կայծկլտացին և աստղեր ու լուսին:  
Ապա թանձրացած ծխից վառողի  
Պոկված եռասայր սվինը Ռուսիո՝  
Միսրճվեց հուժկու,  
Դարերով սարսափ ու ավեր ծնող  
Մեջքը խավարի:  
Եվ յաթաղանը  
Ընկավ տանջահար, արնախեղդ  
գետնին:

Եղավ վառ գարուն,  
Նոյեմբեր եղավ՝ առինքնող ու վեհ,  
Ի տես աշխարհին՝

Մեր ալեճաճան դրուշը հառնեց,  
Փյունիկվեց կրկին քո էրեբունին:

## ԼՈՒՍԵ ՀԵԾՅԱԼԸ

Օրը պարպում է լույսը արևի,  
Ու թավալգլոր կապույտն է իջնում՝  
Հազար նշարդերով անցնող ու շնչող,  
Հազար կյանք ապրած իմ Երևանին:  
Ապա գնացքի ծխանից պոկված  
բարձրացող ծուխը՝  
Ամպերի փեշերն իրար կարկասում,  
Ու քուն ալետող գիշերագալը  
դեռ հապաղում է:  
Ու շափաղվում են ծառեր ու ծաղիկ՝  
հովի հպումից.  
Սարի թիկունքից,  
Դեռ նոր հարսնացած մի աղջա պես՝  
Կիսով ցույց տալով երեսի ոսկին,  
Ժպտում է աչնպես լիալուսինը:

Ու մեկ էլ այնպես  
Սև վարագուրվեց երկնի կապույտը:  
Ու լուսապատիր մի ասուպի պես՝  
Տեսիլքով հարբած աստղերի միջով,  
Այնպես համաշարժ ու թեթևասան,  
Նժույգի կրակ ոտքերը հանդարտ  
Քսելով միրհող սարի կողերին,  
Մի լույս-ձիավոր իջավ Արիներդ:  
Եվ հողը ճկվեց:  
Կապույտն ու մութը խառնվեցին իրար:  
Տնքացող լեռան բզկտված կողը՝  
Զգաց մտերմի՛կ, հարազատ մի շունչ.  
Ու հովը պարե՛ց...  
Սակայն մրրկվեց սիրտը հեծյալի  
Ու ցնցվեց մարմնով.  
Եվ այդ ցնցումից  
Դողաց ոսկենախշ ու բոցեղ սուրը:  
Ի՞նչ էր մնացել բերդաքաղաքից.  
— Մի բուռ ավերակ:  
Ու հեծյալը լույս, աչքերը՝ կրակ.

Նայե՛ց ու նայե՛ց... Եվ անկարագիծ,  
Խուռն մտքերը ելան իրար դեմ...  
Այդ պահին էր հենց,  
Որ հրաշք բացվեց տեսիլքի առջև.  
Հենց աչքերի դեմ...  
Ասես ալիքվեց լուսե մի օվկիան.  
Ապա մագլցեց մինչև Քանաքեռ,  
Ու նազող Նորքի բարձունքների մով,  
Ու մթնաբավիղ Հրազդան գետի  
ափերը ժեռոտ.

Եվ ցնցվեց մարմնով հեծյալը լուսե:  
Լույսից շլացած, աչքերը՝ կրակ  
Վահանելով զույգ ձեռքի ափերով՝  
Սուզվեց մշուշում:

Եվ էլ ի՞նչ հուշում...  
...Ու փոված ահա Երևանն իմ վես,  
Ցավ ու դավերից նա հեռո՛ւ այնպես,  
Որպես անկործան մի ձայնադարան

Նորածին մանկանց՝

Ծննդա՛ է տալիս.

Նա իր յոթներանգ լույսերն է բերում

Ու դարերի խոլ թոհ ու բոհերից

Հառնել ու դեպի հավերժն է գնում:

## ԲԵՄ ԱՄԻԱՆՑ ՎԱՐԱԳՈՒՅՐԻՒ

«Մարդկության հետագա փայլացումը կախված է նրա բարոյական նիւնունքներից, այլ ոչ թե տեխնիկայի մակարդակից»:

ԱԼԲԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆ

ԱՐԱՐ ՏԱԳՆԱՊԻ

Խոսքն իմ խզում չէ,  
Եվ ոչ էլ հեշտին մի ինքնաքեկում,  
Կամ էլ հեթանոս մի աղոթագիրյ,  
Այլ ծալքակոնիվ մի զարկ ուղեղի՝  
Իմ ահեղ դարի վաճառակ-պատերից:

Եվ... Զարկվի՛ պիտի

Ինչ է, չե՞ք լսում իրարու բախտիտ  
Ահեղատրոտ ձայնը ամպերի՝  
Հեցց դարիս շուճճ է,  
Ու կամքս է հաստատ՝

Ներհակ ուժերի ու սիսանություն  
Գոյատևումը:  
Եվ ժամանակն իմ,  
Որ երակիս մեջ,  
Հոսքում իմ արյան՝  
Գլոր է գալիս կոտորակի պես,  
Այդ ահ է կոչվում,  
Այդ պահ է կոչվում,  
Որի ընթացքում պատանին խեղված՝  
Ցնոր ուղեղի անողոք մղմամբ  
Մահին է խաչվում:

Կիզվում է հոգիս դարիս քուրայում,  
Սակայն համբերի՜ր... Գոչում է սիրտն իմ:  
Բայց ո՞նց համբերել,  
Երբ մանուկն անգամ  
Դեռ մոր արգանդում մտածել գիտի.  
Ինչպե՞ս չդողալ այս խելք-հրաշքից:  
Բայց մահի գիրկն է անցել հրաշքը:

Հնում,

Երբ մարդը դեռ չէր էլ ստում,

Նա իր կամքից դուրս ամեն կատարված

Հրաշխ էր կարծում ու աստվածային,

Եվ... Արդեն չկան աստվածները այն

Հեթանոս ու հին.

Իրենց տեղը լոկ

Թողել են միակ մարդ ստեղծողին,

Որ ստել գիտի,

Կործանել գիտի անգամ ինքն իրեն:

Հնում,

Որ մարդը քարանձավային՝

Ամոթ-բնազդով,

Միշտ փակ է պահել իր մերկությունը,

Արդ, մերկացել է նա իր էությանը,

Ու կարողությամբ այնքա՛ն վեհացել,

Որ ստվերում է իր մերկությունը:

Հնում,

Երբ մարդը, մարդը հեթանոս

Արև է պաշտել,

Արդեն շոյում է վարսերը նրա,  
Էլ ո՞նչ չգժվել  
Իրականացած այս խենթ-հրաշքից:  
Բայց գժվելն ի՞նչ է...  
Մի՞թե գժվելով ետ պիտի բերի  
Մարդն՝ ինքն իր հանդեպ կորցրած հավատը,  
Որ... Մարդ է ծնվել...  
Բայց ո՞ր է մարդը,  
Որ միայն, միայն աղոթել գիտեր  
Գործած մեղքերի թողության համար,  
Որ միայն, միայն նա սգալ գիտեր  
Եվ պատճառը լոկ որպես հետևանք  
Համարում էր սոսկ ճակատագիրը:  
Որ... Սակայն ինչո՞ւ հինը ետ կանչել,  
Որ մարդը, մարդը արևը թողած  
Կրկին ետ դառնա քարանձավն իր մո՞լթ,  
Որ մարդը հիմա շուրջպար է բռնել  
Սատղաժովի հետ,  
Ծակատագիրն իր  
Վճռի նորից աստղի շարժումն՝վ...

Ո՛չ, բլուր անգամ ո՛չ:  
Արդ, հարդագողի ճամփան իր համար  
Շա՛տ է հնացել,  
Եվ էլ ի՞նչ լեգենդ,  
Երբ լուսնից անգամ նա դող է քամում:

Եվ այսբանից ետ  
Ի՞նչ անուն տամ քեզ՝  
Եթե ոչ աստված,  
Ուրեմն լոկ մարդ,  
Որի զորությամբ  
Վերջն ու սկիզբն են իրար զուգորդվում:

Եվ ի՞նչ է մնում:

Մնում է լինես այնքան մարդկային,  
Ո՛վ մարդ աստծո,  
Որ ջրով հեղես անդաստանն արևոտ  
Ու անձակեղեք թախծությանը խոր  
Ներհակ դուրս քերես լուսո կամփը քո:

## ԱՐԱՐ ԱՄԵՆԱՅԵՍ

Էությունն իմ որք՝ սմբած մարմնիս մեջ,  
Կեումաններում ողջ՝ հոգին իմ կիզման,  
Ծփոթված ու խեղճ,  
Բոցերում անշեջ ու ահավորիկ,  
Ու դիմակների նայվածքներում կեղծ,  
Ու դավերի դեմ հոգնաբեկ հոգով,  
Ե՛վ... Սակայն ևորեն  
Գլխահակ կանգնած անհայտության դեմ՝  
Քաղցի պես տանջող ներքին մի ցավով՝  
Աղերսում եմ ես՝  
Արդ, մարդը թեկուզ պատռել է իր իսկ  
Առաքիճության առագաստները,  
Թող ներվի՛ դարձյալ,  
Ներվի՛ թող, ներվի՛,  
Թե շվայտաբար հոգսի արմատին  
Սնունդ է տալիս,  
Թող կրկին ներվի՛,  
Նորից ներվի՛ թող,

Երբ մոլութեան սուր ցավով բռնված  
Խորտակում է նա հայելիները  
Ողջախոհութեան,  
Թե այստե՛ղ,  
Ցածո՛ւմ,  
Հավիտենութեան վախճանն է բաղձում՝  
Էլի ներվի՛ թող.  
Չէ՞ որ նա իմ մեջ իմ արարումն է,  
Երազանքներիս ծնող,  
Սնողը,  
Ինձ արարողը  
Ու ամենագոր  
Աստվածն իմ միակ ինքնաճանաչման.  
Թող ներվի՛,  
Ներվի՛...  
Եվ աղերսանքս հասնի թող հայտնի  
Ու բոլոր անհայտ մոլորակներին,  
Հասնի աստծուն ճանաչողության  
Ու դող գա սրտին,  
Ու խլիրտ զգան ծալքերն ուղեղի,

Մի քիչ մարդանա,  
Եվ աստվածային չքյալ ատյանում  
Քննության առնի՝  
Վարքն ու քարքերը կիսաստված մարդու:  
Իրավ կիսաստված,  
Նաև անաստված մարդ արարողը՝  
Լսո՞ւմ ես, աստված,  
Քննում է աստղի բաբախումները,  
Բռնկումները ջեռ արեգակի  
Ու կորիզների ակտիվացումը՝  
Հեռու, հեռավոր գալակտիկայի,  
Արդ, մարդու աչքին,  
Ինչպես երիներանգ  
Հրավառության տրոհվող խուրձը  
Բերում է միայն թեթև հանույք մի:  
Թեթև ասելը դյուրին է, իրա՛վ,  
Որքան դժվարին,  
Զավեշտական է  
Հավատազերծին խաչակնքելը,  
Ու փառամոլի գունազարդ ու սին

Երազանքներին  
Խառնել խորհուրդը փութանցիկության:  
Եվ մրցակցության մարմաջը հանել  
Հոգուց ոսկետենչ,  
Որ վերանում է միջցամաքայնից  
Միջաստեղային արնահեղության:

...Մինչդեռ փոթորկված օվկիանի խորրում  
Կյանք կա, տիղմի մեջ՝ նավեր կործանված:

Եվ առնատաղի հարթակին կառչած՝  
Փշոտատուն սարդերն են իրենց  
Փափուկ մաշկի տակ,  
Նպատակ արած ամփոփ ձգտում մի՝  
Ոստայն են հյուսում,  
Զանում են բանտել  
Լուսամղումը այն միակ ջահի,  
Որ միայն,  
Միայն  
Հալածել գիտի խավարին դժնի,

Վերջակէտ դնել խարդավանքներին:  
Իսկ վարո՞ւմ,  
Վարո՞ւմ,  
Այնպէս անարգել մի առնետապար,  
Մի ողջ գորշութուն,  
Թանձրածուխ ու գաղջ սրճարանների  
Գարշության մէջ խոր  
Խրված թախծութուն,  
Հոգեվարք ապրող ճշմարտության խուլ,  
Ընդհատվող ու գոլ շնչառության տակ՝  
Քողարկված տագնապ,  
Կարոտ մի լքված,  
Սմբած հեծեծանք,  
Ապա ընձյուղվող,  
Չքմեղապատիր մի ո՛ղջ խարդավանք,  
Եվ ստրկամիտ ուղեղի հտալիտ  
Մթին հալածանք,  
Խոսքերի տանջանք,  
Հոգու զառանցանք,  
Մարդկության լկում,

Մայրության զրկում,  
Թրատում արյան,  
Ու խղճի՛,  
Եոթի՛,  
Հևքի՛ արքանում...  
Եվ դո՛ւ, ո՛վ սամում,  
Վերցրու նեղը պտտահողմիդ մեջ  
Ու այնպե՛ս պտտի, որ նա դարձի՛ զա...  
Սակայն հարսներանց գրկի մեջ տարուկ՝  
Հրդեհ ծոցեղեն,  
Բոցեղեն հանույթ,  
Խլիրտ օձեղեն.  
Ու անուրդ մտքի,  
Ու անուրդ խղճի,  
Մարմնի  
Ու արյան...  
Եվ այս ամենը՝  
Հենց այստե՛ղ,  
Ցածո՛ւմ...

Ուր որ մեռնում եմ սրբությունները,  
Զարի արգանքն է երախն իր բացում:

## ԱՐԱՐ ՆԵՐՔՆԱՄԵՉ

Իրավ, մի՞թե ես դեռ չեմ հասկացել  
Լեզուն իմ դարի,  
Որ նույն լեզվով է ինձ օրոր ասել,  
Որ նույն շնչով է մանուկ օրերիս՝  
Ցրտից փայտացած ձեռքերիս բերել  
Կյանք ու ջերմություն,  
Սակայն և հիմա՛...  
Փշրելով հույսի  
Երազներն իմ վառ պատանեկության՝  
Սառնություն է սոսկ  
Ներս փչում հոգուս պատուհաններից՝  
Ի՞նչ իրավունքով:

Ի՞նչ իրավունքով՝  
Արևով հղի

Հուզմունքների նուրբ ու անմեկնելի  
Խառնուրդն ու վայրագ ուղեղի տեղիք  
Խարկել միևնույն կաթասայում, ապա  
Խենեշին կարգել որպես մատուցով՝  
Ի՞նչ իրավունքով.

Ի՞նչ իրավունքով չոր անապատին,  
Որ նուրբիսկ օդն է խեղդվում տապից,  
Կոչել օազիս,  
Իսկ օազիսին՝ կանաչ ավազուտ.  
Ավազն էլ կանա՞չ... Օ դո՛ւ պղծություն,  
Որ շնթոկել ես  
Իրականությանն աչքի ավիշում:

Ի՞նչ իրավունքով՝  
Հեշտասիրության մոլուցքից գծված  
Մեղկությունները՝  
Առաքինության պիտակով անցել...  
Ու նրանց առջև,  
Ո՛վ անբարեհաճ իրականություն.

Աստվածությունն է ծնկած աղոթում՝  
Իբր իր գործած մեղքերի համար:  
Ու մայրությունն էլ՝  
Լալկված սարսափից,  
Իր մանչին խեղդող ձեռքն է համբուրում...

### ԱՐԱՐ ՀԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ

Եվ վերադարձա  
Նախնական ու պարզ քառսն աշխարհի,  
Խարիսխ ձգեցի ես տիղմերի մեջ,  
Որոնց հատակում խրվել էին խոր՝  
Անվերջանալի մեղքերը կյանքի:

Ծորջս փռված էր մերկ ամայություն,  
Ու սարսափազդու այդ մերկության մեջ,  
Բնության մթին քմահաճույքի  
Հանդեպ մանրահոգ,  
Ընկած մահվան բոթ  
Սարսափների ու կյանքի մոլազար  
Տանջանքի միջև,

Ես ճամփա ընկա դարերի միջով...

Ազնիվ կրքերը ազնիվ ներքինի  
Հոգեմեծության դիմագծերն են,  
Սակայն միայնակ,  
Մեկուսի դուրս գալ  
Կամ ընդդեմ գնալ  
Իրականության դաժանությանը,  
Դա հավասար է օրը ցերեկով՝  
Պարկեշտ ու չնչին  
Հասարակության աչքերի առջև  
Տկտրանալուն:  
Բայց կյանքը, իրա՛վ, ուժգին եմ սիրել,  
Եվ սերը հզոր  
Համազոր է լոկ մոլի խենթության,  
Իսկ եթե խե՛նթ ես,  
Դարձյալ,  
Վերստին դու պի՛նդ ես սիրում,  
Թե պի՛նդ ես սիրում,  
Զորքերն էլ հզոր ու կարծրավահան՝

Անգոր էն սրտիդ չնչին զարկի դեմ:  
Եվ սրտի զարկով  
Շուրջ երկու միլիոն տարի քայլեցի...

Ինչե՛ր չտեսա իմ նախապարհին...

Տեսա ես նաև բորիկ ոտքիս տակ,  
Լպրծուն ու տաք տիղմի արգանդում՝  
Բեղմնավորումը կյանքի մեղքերի,  
Որ հետո կոչվեց սուկ նախասկիզբ:

Կիրքը դա մոլի սիրահետում չէ,  
Մղումն է արյան,  
Ու արյան մղմամբ՝  
Ցեղը մարդկային  
Կշտացած ու կուռ,  
Միաբանության թմրիրից պոկված,  
Սիրեց խնկարկել  
Հարստության թավ ծածկությունների տակ  
Ահագնացող ու բարոյալքված  
Մոլությունների աստվածներին սին:

Այսպես ծնվեցին  
Ստրուկներ ու տեր...

Եվ այդ տերերը մխրճված իրենց  
Մղումների ու երկվությունների  
Հեղեղում վայրի,  
Հենված իրենց իսկ կողմից խորտակված  
Սրբությունների փլատակներին,  
Ջանում էին սուկ կանգնեցնելու՝  
Դաժան ընթացքը ժամանակների:

Եվ ճանապարհին ես ինչե՛ր տեսա...

(Էհ, ժամանակներ թեր ու թերարժեք)  
Հգորնե՛ր օրվա...

Իրենց սպառած իշխանություններ,  
Եվ ուշակորույս օրենքի ներքո՝  
Առաքյալների դիմակով գողեր,  
Ընչաքաղցության տնօրեն ու տեր՝  
Սահմանափակված մի ազատություն

Ու խեղդող հոգսեր,  
Լուծ անհայտության  
Ու հանկարծական տենդի բռնկում՝  
Ոսկու նկատմամբ,  
Գահի  
Ու փառքի,  
Շքանշան ու աստիճանների  
Սիրահարություն,  
Ու մրցույթ մոլի՝  
Ինտրիգների ու շողոքորթության:  
Ուղղամտության գրավչության տակ  
Տեսա թաքնված  
Ահեղ նենգության մրուրը մթին,  
Ու փառաբանված միապետների՝  
Պսակազերծված,  
Եվ խոռվահույզ ոգիներ տեսա,  
Որ թափանցելով ժամանակների  
Շերտավոր ու բարդ սյունների միջով՝  
Լույս էին սփռում  
Խեղդող ու թանձր խավարի վրա՝

Ողջակիզվեցին,  
Կամ գիլիոտինով լուռ գլխատվեցին,  
Եվ ցնորապաշտ ու կուրադական  
Ճորտերի տեսա՝  
Կառափնարանում  
Ընդվզման անսանձ մոլուցքով բռնված,  
Պարելով մոլի մահն ընդունելիս.  
Եվ մեռյալների՝  
Խով ու ուրվաձայն կանչերը լքված  
Թարտացին իմ ոսկորների մեջ:  
Հավիտենության բարբախը անտես  
Տեսա տարածքում ես անսահմանի,  
Խաչակիրների արշավանք տեսա  
Եվ թրատումը  
Եռամատային խաչակնքումի,  
Եվ օտարացած իմ ժողովրդից  
Պետությունների կմախքներ տեսա,  
Ու ասպետների՝ զերծ պատրանքներից,  
Եվ աննպատակ ու դաժանատես:

## ԱՐԱՐ ԽՈՐՀՐԳԻ

Դու իմ հեռավոր,  
Չբացահայտված մտավոր պատրանք,  
Նան բացահայտ իմ ճշմարտություն՝  
Լույս սփռիր հոգուս  
Միգամածության վարագույրներից,  
Ու ցրի՛ր,  
Ցրի՛ր  
Տառապանքներս:  
Սրտիցս ժայթքած հրաեռ լավան  
Հասցեագրվի թող մոլորակիս,  
Թափանցի բոլոր ծակոտիները,  
Եվ սրտերը գոս ու կարծրավահան:  
Եվ կարծես չես էլ զգում այրոցքը:  
Ու ապագայի ողբերգությունում  
Մեղավոր է նա,  
Ով աչք է փակում իր ժամանակի  
Արատների ու հոգսերի հանդեպ:  
Իսկ մեկ արատից

Բյուր հանցանքներ են հեճակ ծառայում,  
Ո՛ր մնաց շատին...

Ու եթե, իրա՛վ, դու հանցավոր ես,  
Ուրեմն հոգիդ ծոցը դժոխքի  
Ուղարկելն անշուշտ պարտքն է բոլորիս,  
Ինչպես և պարտքն է՝  
Կործանել մոլի փառատենչներից:  
Մա՛րդ, կրկին անգամ աղաչո՛ւմ եմ քեզ,  
Զուր մի՛ մթագնի դեմքը աշխարհի,  
Տրված մարդկային պարզ երջանկության  
Կողքով մի՛ անցնի...

Երկրի ու երկնի բարեկամությամբ  
Փշրվեցին հին առասպելները,  
Թաքնվեց աստված բարեմտությամբ,  
Որ երկնասլաց մարդն աստծո դերը  
Կատարի պատվո՛վ,  
Աստվածավայե՛լ...  
Եվ քեզ ի՞նչ կոչել՝  
Լոկ ցնորամի՛տ,

Արկածախնդի՞ր,  
Զգացմունքների հավատարմատա՞ր,  
Թե՞ ձկնկիրթի սուկ խնամատար՝  
Ծովի խութերում,  
Որ մարդասերի զենքը դեմնն անել,  
Սատանային ես  
Տեղ տվել հոգուդ ծանծաղուտներում:  
Ինձ համար հիմա  
Հասկանալի են  
Աշխարհի բոլոր անեղծվածները,  
Եվ դրա համար քիչ կարևոր չէ,  
Որ երկու միլիոն տարի քայլում եմ  
Իմ մոլորակի դարերի միջով:

Եվ գիտես անշուշտ՝  
Ամեն երջանիկ դիպվածը մարդու  
Դիմագծերի խտացումներն են,  
Քո անեղծածով դու հզոր ես, քան  
Դիմախաղն համրի,  
Կույրի համար իր զգոն մատների

Ճոշափումները երաժշտական,  
Եվ լուսնասերը քնաշրջիկի.  
Այո, հզոր ես,  
Գերհզոր այնքան,  
Որ սարսափում եմ՝  
Չլինի հանկարծ իր հզորությամբ  
Անձն իր կործանի:  
Իսկ հզորները  
Տառապել են միշտ ինքնակուրությամբ,  
Ծատ հանախ նաև  
Սահմանափակել տեսադաշտն իրենց,  
Ու կործանել են  
Իրենց թվացող հզորությունը:

Դու հավանաբար կմաքրես հոգիդ  
Երկվությունների ծխածածկույթից,  
Եվ դեն կենտես  
Ընչաքաղցության,  
Տառապանքների  
Ու բեկումների,

Երկփեղկումների  
Երերուն հողին հեճակված գահի:  
Մոլորյալ հոգուդ խորշերում եթե  
Տեղ չունի կյանքս,  
Գոնե փոքր-ինչ սիրիք քո ամձը  
Ու մի՛ պատժիր քեզ,  
Ավարտ մի՛ դնի կյանքիդ ընթացքին:  
Թե պատճառես ինձ հիասթափություն,  
Կորուստ հավատի  
Ու հոգսեր դաժան,  
Իմ պատրանքների,  
Խոռվ հույսերի,  
Հույզերի քորան ոտնատակ անե՛ս,  
Կործան ու ավեր տաճարի մի բուն  
Ծխոտ քարերի՛ կթագավորես:

Իմ նպատակի վերին ոլորտից,  
Նրանից անդին՝  
Զգվում են հոգու թագավորության  
Սահմաններն հզոր:  
Շնորհակալ եմ

Բնության վսեմ շռայլությունից,  
Եվ ես զգույշ եմ վարվում նրա հետ:  
Օգտվում նաև նրա քարեհունչ  
Ու տաքուկ քամուց,  
Որով լցվում եմ առագաստներս:  
Դո՛ւ էլ օգտվիր,  
Դեռ ուշ չէ, ո՛վ մարդ,  
Բնության կողմից  
Քո էությանը հասցեագրված  
Շնորհներից ողջ,  
Ու թե վտանգես անձդ քեզ տրված,  
Գնաս հակառակ,  
Ուժ տա կրքերիդ թևը պատրանքի՝  
Կկանգնես, անշուշտ,  
Այնքան ակներև  
Նավաբեկության փաստարկի առջև:  
  
Թվում է կարծես հասկանում ես ինձ,  
Որ կարևոր է, քան այնպես սերտած  
Կանոնները ողջ առաքիչության:  
Ես չեմ կամենում,

Որ քո մարդկային  
Վեր ու վար անող հոգու ոլորտը  
Դառնա խղճալի ավարը չարի:  
Տեսել եմ, իրո՛ք,  
Մարդիկ ինքնակամ մահը գրկելիս,  
Սակայն և կամոք  
Չեն էլ ցանկացել լինել ինքնասպան:  
Ուրեմն լսիր շիրմաքարերի  
Առեղծվածային լուռության խորքից  
Խուլ հեծեծացող  
Անցողիկ ու սին խորհուրդը կյանքի՝  
Նախ պետք է սանձել  
Ափերակործան տարերքն օվկիանի,  
Նոր դառնալ նրա  
Ցնորքով նյութված անհասարկությանը  
Տնօրեն ու տեր:

### ԱՐԱՐ ՎԵՐՋԱՉԱՅՆ

Գավաթներն ամեն ժամանակների  
Ըմպած մինչև իսկ մրուրը, սակայն  
Պատրանքներիս տաք շառավիղներում՝

Հիմ աշխարհների  
Առասպելաճին հերոսների լայն  
Ծնչառությունը՝ մարդասեր ու մեծ,  
Ակներև առած լծակ նժարման՝  
Կամա մտա այս ահեղ խաղի մեջ:  
Ամենաճանրն ու դիվայինը՝  
Էությունդ է, մա՛րդ,  
Որ նմանակիդ՝  
Երազանքներով  
Բեռնված նավակի առագաստները  
Անցավ գրկում ես բարեբեր քամուց.  
Ուրեմն չքվի՛ ծոցը գրողի՝  
Բնույթիդ ները:

Մա՛րդ, որդուդ սիրով  
Կանհիժեմ անձդ՝  
Հույսերիս անմեղ փլատակներից,  
Եթե կամենաս կործանման գնով,  
Իմ մոլորակը խլել ինձանից:

## ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

(Հատվածներ դրամայից)

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Հայկ— Հայոց նահապետ

Համրամ— Հայկի կինը

Արփակն— Հայկի դուստրը

Արամանյակ

Խոռ

Մանավազ

Դայակ— Արփակնի

Իսկանի— Հայկի զինակիցը

Տարբան— Արևի տաճարի մեհենապետը

Առնակ— Զորական, հետո Հայկի զինակիրը

Բել— Բաբելոնի արքա

Նին-Խորսազ— Բելի մայրը

Պալաասի— Բելի ուսորը  
 Բերոսոս— Մարդուկի տաճարի քրմապետը  
 Դադարշիշ— Բելի եղբայրը, գորավար  
 Ավագ զինավարպետ— Հայկի կողմից  
 Մանգու— Ցեղապետ Արման ցեղի  
 Օտարական— Արման ցեղից  
 Սուրհանդակ— Կադմոսի կողմից  
 Քուժկան— } — Հայկի կողմից  
 Բանբեր }  
 Ա. Քուսան } — Հայ գուսաններ  
 Բ. Քուսան }  
 Ք. Քուսան }  
 Ա. Շինական } — Հայ շինականներ  
 Բ. Շինական }  
 Ք. Շինական }

Հայ և բաբելական պորականներ, սպասավորներ  
և ժողովուրդ:

(Գործողությունը կատարվում է 3 թղ հապարամ-  
յակում մ. թ. ա.):

## **ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ, ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ**

Սյունապարդ մի դահլիճ՝ Սրահի խորքում  
սատին կախված է նիզակ, դաշույն, սակր,  
աղեղ, կապարձ, վահան

Բազմականներին նստած են Հայկը, Համ-  
րամը, Արամանյակը, Խոռը և Մանավապը.

**ՀԱՅԿ**

**(Հեզնելով)**

Արփակն, ասում ես, սիրահարվա՞ծ է.  
Ինչպիսի՞ հանցանք...

**ՀԱՄՐԱՄ**

**(Մտահոգ)**

Ողջախոհ լինենք այս հարցի հանդեպ:  
Դու, հայրն ես, պարզ է,  
Եվ ես էլ մայրն եմ,  
Արփակնի բախտը  
Պետք է մեզ հուզի հավասարապես:

## ՀԱՅԿ

Արփին էլ լույսն իր  
Պարգևում է մեզ առանց խտրության.  
Մտքերից թաքուն իմաստը մեկնիր:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Քրոջս կողմից սիրված փեսացուն  
Սերված է շնչին ընդոծու տոհմից:

## ՀԱՅԿ

### (Թիկներով)

Ընդոծու դուստր էր և ծնող մայրդ,  
Վիթի աչքի պես անմեղ աղջնակ  
Ու մաքրակենցաղ,  
Ջրի պես վճիտ,  
Երկինքը վկա, մի քայլող հմայք...  
Ու ինձ պարգևեց որդիներ կտրիճ:

## ԽՈՌ

Ժամանակները,  
Հայր իմ, էլ այն շեն:

## ՀԱՅԿ

Սերը չգիտե՞ս ժամանակ ու ժամ:  
Իսկ ո՞վ է տղան:

## ԱՐԱՄԱՆՅԱԿ

Զորականը այն,  
Առնակ է կարծեմ անունը նրա,  
Որ սրամարտեց Մանավազի հետ:  
**(Ծոցից հանում է թավշյա մի փաթեթ)**  
Տարբանն ինձ ասաց,  
Որ հավախոսին՝  
Տարփազեղման մեջ Արփակը ընկած,  
Արփու վեհագույն զոհասեղանի  
Առջև ծնրադիր՝  
Աղոթում էր իր ընդոծու համար:

## ՀԱՅԿ

### **(Դիտելով վարսափունջը)**

Տեսարանն անշուք  
Ու պատիվ փրկող խոսքե՛ր սնամեջ,

Որդի՛ս, եղբորդ պարտությունն անշուշտ  
Փոթորկվում է քո երակների մեջ:

**(Նայելով Արամանյակին)**

Աղոթքը քիչ է անան խիզախի  
Սիրո համար մեծ  
Ու հաջողության,  
Պետք է որ լինես բազկակից նրան,  
Քանզի հզորը քեզ չի խարդավի:  
Իսկ թե կտրիճին  
Զգնահատեմ կտրիճավայել,  
Եվ չհեճակեմ կամքը սիրապաշտ  
Հարազատ դստեր,  
Օ, թող որ լինի անձս դիտապաստ:

**(Քալիս է Իսկանին: Նա  
ամբողջությամբ սպառազեն է)**

ՀԱՅԿ

Ի՞նչ լուր, Իսկանի,  
Անպատեն այցդ խորհուրդն ունի իր:

## ԻՍԿԱՆԻ

Մարդիկ խժական,  
Ավարառության մոլուցքով բռնված  
Հարձակվել էին ակն տիեզերաց  
Բագինի վրա:

**(Իսկանին հանդարտ արձակելով  
բազպանները, մոտենում է ազատ մի  
բազմականի):**

## ՀԱՅԿ

Իսկանի՛, որքան արագաշարժ ես  
Դու սրամարտում,  
Կրկնակի անգամ ծուլլ խոսելու մեջ:

## ԻՍԿԱՆԻ

Խստամբակները նոր էին, ի դեպ,  
Հասել մեր բագնի պարիսպներից կուռ,  
Մեր երեքթևյան նետերից հուժկու  
Խուլս տվին մի կերպ:

**(Ներս է մտնում Առնակը՝ առաջ  
մղելով զինաթափ ու ձեռքերը  
կապկպած մի մարդու: Համրամը  
գնում է):**

#### **ԱՌՆԱԿ**

Արման ցեղից է:  
Իր խմբով վերին արոտատեղից  
Ինչքը մեր կուզեր... Սակայն նրանցից  
Շատերին սիրով  
Ծանապարհեցինք աշխարհը ավքի,  
Իսկ մնացյալն էլ եղան քաղմացիր:

#### **ՀԱՅԿ**

**(Վեր է կենում՝ նայելով անձանոթին)**

Դեռ սա կրում է թիկնոց այծենի,  
Վուշից լայն տաբատ,  
Պիտի որ լցնի որովայնը իր  
Ուրիշի ինչքով

Կամ հավաքություններ.

Չեղբերն արձակի՛ր:

**(Առնակը վարանումով մոտենում է  
օտարականին):**

ՀԱՅԿ

Փութաջա՛ն եղիր:

ԻՍԿԱՆԻ

**(Քննիչադով)**

Ի՞նչ վեհանձնություն,

Երբ արդարում եմ և հելուզակիև...

**(Օտարականը բերանքսիվայր փռվում  
է հատակին):**

ՀԱՅԿ

Արարք կլինի մի շհարուցյալ,

Որ ինքնագլուխ ազնակցի հանդէս

Վարվեմ խժաբար...

**(Օտարականին ոտքի կանգնելու  
նշան է անում):**

Կյանքդ ի շնորհ,  
Վերադարձնում եմ նաև զենքերդ,  
Ջանա ետ կանգնել ճամփիցդ խոտոր,  
Եվ գիտցիր հստակ՝  
Միայն ոչինչն է  
Ավարտության և հիմքն ու վերջը:

#### **ՌՏԱՐԱԿԱՆ**

Ո՛վ աստվածագոր,  
Կատարեցիր դու  
Ականջի համար շլաված մի բան.  
Ես և եղբայրն իմ՝  
Ցեղապետ Մանգուն,  
Կհատուցենք քո հոգեմեծության  
Հանդես արչամբ մեր:

**(Օտարականը դուրս է գնում:  
Առնակը հետևում է նրան):**

ՀԱՅԿ

Զորականի թաղ, մի՛ աճապարհիր,

ԱՌՆԱԿ

(Առաջանալով)

Պատրաստ եմ լսել

Մեծ նահապետին:

ՀԱՅԿ

Սրտով հզոր ես,

Ու նույնքան անգամ

Բազուկի արժան դրվատանքին իմ,

Այրդ թիկնավետ,

Առնակ եմ կոչում անունդ կարծեմ,

Անադեն եղիր դու զիճակիրն իմ,

Նաև խոհակից բազմահոգ պահիս:

ԱՌՆԱԿ

(Պատյանից հանում է սուրբ ու  
դնում ճակատին):

Պատրաստ եմ սուրս

Դնել հայրենյաց սուրբ հողի համար:

## ՀԱՅԿ

Առնա՛կ, հողը միշտ սուրբ էլ՝ կմնա,  
Թե հողատերը սուրբ չտա դավիւն...

### (Դադար)

Արդյոք արմանի կյանքն ապահո՞ւվ է՝  
Մինչև հասնելը  
Հայրենի հողն իր:

## ԱՌՆԱԿ

Տե՛ր մեր... Վաղօրոք զգուշացված էր՝  
Դրսում սակրավոր  
Երեք զորական պահակում Լիւն.  
Նրանք կուղեկցեն:

## ՀԱՅԿ

### (Վեր կենալով)

Խաթեից մինչև ծովը Վրկանից,  
Կիմարաց երկրից Միջագետք մինչև՝  
Փռված մի երկիր,

Որի լեռների  
Չյուն կատարներին ամպերի թերթե  
Ոգուն է միայն հասանելի լոկ,  
Ու անձավներում,  
Որոնց խավարում  
Դողը կպատի մարմինը ավքի,  
Մարդիկ են կենում տառապատանջյալ,  
Ցեղեր ազնակից,  
Բայց հնուց անտի,  
Եվ դեռ մնում են  
Իրարու կողմից այնպես հալածյալ:

#### ԻՍԿԱՆԻ

Այդ ինքնագլուխ հելուզակներին  
Խելքի բերելը դյուրին չէ այնքան:

#### ՀԱՅԿ

Դյուրինը միայն  
Խույս տալն է, Իսկա՛ն,

Դժվարին գործից.  
Մի փորձիր նրանց  
Կացարանները մտնել գետնախորշ  
Ու քրեղանից  
Ո՞ւշակել թանձր շիլան հաճույքով,  
Երբ մագլցում են որսի ետևից  
Ժայռերն ի վեր քարայծի նման,  
Աշխատիր ելնել միայն առջևից.  
Վտանգի պահին չլքես նրանց.  
Միրել էլ գիտեն.  
Այդ ջանա սրտանց զգալ, և ապա  
Դեմքերը նրանց՝ խիստ ու չարացած  
Շուրջդ կկազմեն հավատի շղթա:

**ԻՍԿԱՆԻ**

**(Թիկնելով)**

Հավատան թեկուզ,  
Էլի բնույթով  
Մնալու են բիրտ ու կրկին անսանձ:

## ՀԱՅԿ

### (Շեշտակի նայելով Իսկանուն):

Երբ ձին թռչում էր դաշտերով արձակ,  
Սահումով թեթև՝ նման երազի,  
Ասի՛ր,  
Բնույթով այն հեշտասա՛նձ էր:  
Երազն էլ սանձվի՛...  
Սակայն անկոտորում ձինն այդ երազի  
Ինձ ու քեզ համար  
Ա՛րդ նժույգ է մի:

## ՄԱՆԱՎԱՁ

Հա՛յր, մանր ու անհայտ  
Ցեղեր էլ կան, որ  
Հարկ չէ երևի նրանց ճանաչել:

## ՀԱՅԿ

Բույսերի թավուտ տերևներից զոր  
Կառչած ապրում էր մլուկ միջատը՝  
Մանրությամբ իր իսկ անվանն համազոր՝

Դեռ շատ կանար անհայտության մեջ,  
Թե որ վրիպեր  
Մարդուց ականող՝  
Չէինք ունենա էլ որդան կարմիր,  
Երանգն այդ դյուրթող,  
Որ զարդարում է բուրդ ու քղամիդ:

**(Պատուհանից դուրս նայելով)**

Ահա՛, դիմացի այն սարաբերդը,  
Որի կատարին աստվածն է ամպի՝  
Ցեղեր համարենք ամեն մի շերտը,  
Եվ սարը՝ մի ազգ,  
Ե՛կ ու կործանիր...

**(Դադար: Դեպի նստածները)**

Ուրեմն իմացեք,  
Որ մեր հարավում  
Շու երն է հզոր,  
Իսկ արքադները՝  
Նմանակն իրենց չունեն դավերում.  
Որի՞ն թվարկեմ.

Կորովացել էր կիր Փյունիկեն:  
 Զորաշարժումով Ղպտին եղկելի  
 Ծավալ է տալիս իշխանությանն իր,  
 Եվ պե՛տք է արանց դիմագրավենք:  
 Սիրելի՛քդ իմ,  
 Այլ կերպ չի՞ լինի.  
 Միայն ջերմությամբ պետք է նվաճենք  
 Հավատք պատակտ ազգակիցների,  
 Ինչպես ժեռ քարի սիրտը նվաճեց  
 Կրակը բոսոր,  
 Ու հոգուց քարի երկաթը շաչե՛ց...  
 Եվ հիմա ունենք խոփ, սակր ու սուր:

## ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ, ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Ուղղանկյուն մի ընդարձակ սրահ: Պատերը  
 ծածկված են ֆանտաստիկ կենդանիներ, ռապ-  
 մական տեսարաններ, մակապատժի ենթարկված  
 գերիներ պատկերող բարձրաքանդակներով:  
 Պատերի տակ՝ աստվածների արձանիկներ Կող-  
 քի լայն պատուհանից զիջերային մթության մեջ

տեսանելի է զիկկուրատ աշտարակի վերնահարկում բոցկլտացող կրակի ցոլքը՝ Մարդուկ առածու տաճարն է:

Մուտքից ձգվում է կամուրջը, որ իրար է կապում ջրավազանի երկու կողմերը: Շուրջը վաքրիկ այգի է: Սրահի վերնամասում գահույքից վար ձգվող սեղանը բոլորած արքունիս գիւովցած է Առջևում կիսամերկ կանայք սյորտապար են տալիս:

Բելը մտահոգ ընկղմվել է գահույքի մեջ Նրա ծիրանու քղանցքը ընկել է հատակին:

## ԲԵԼ

Արդա՛րև, թորշոմած ձեր երակներում  
Քաղդեական նոան գինին է եռում:

(Արքայական գալստառույ ներկյաներին հեռանալու նշան է տնում: Բոլորը վեհերոտ հեռանում են. Թիկնասպառները դեռ հապաղում են):

Եվ դո՛ւք,  
Թիկնապահներ..

**(Թիկնապահները նույնպես  
հեռանում են):**

Մնում է մեկուսի այսպես թիկնել  
Ու խորհել շուրջն անելիքիս,  
Ապա թե ոչ  
Ծանրամիտ զեխահակներն այս  
Կիսամրեցնեն ակնը խոկումիս:

**(Աչքերը մի պահ սահեցնում է կուռ-  
քերի վրայով, ապա երկար կանգ առ-  
նում նրանց կենտրոնում զահանհատ  
իր ոսկեձուլ արձանին):**

Բազմաքանդակ կուռքեր...  
Բաբելոնյային անասան ու շենշող  
Մեկ աստվածն արդյոք ներբովթ հերիք չէ՞ր,  
Եվ այն էլ քեզ նման հզորագույնը:

**(Զեռքը թափ է տալիս)**

Սրանց հարցն այլ է, ու քեզ վեհանձնաբար  
Դիրքն իրենց չեն զիջի կամովին,

Սակայն գորությամբ իմ, ինչպես  
շումերներին,  
 Ինչպես արքադներին, երկրին Սեհաար՝  
 Ըմբռնյալների որպես գավաթներն իմ.  
 Սրանց հե՛րթն էլ կգա...  
 Բեթուան էլ ծանրագոր ինձ չանասց,  
 Դաշնակից համարեց Եդովմին,  
 Բայց զատ-զատ գերեցի ես նրանց,  
 Ավերակ դարձրի Փյունիկեն:  
 Հեթիթն ու Կիսերը ընդվզել ջանացին,  
 Ոտքս ընկան ծնկաչոք երկուսն էլ,  
 Իմ կառքին գահն իրենց զոհ բերին  
մեդացիք,  
 Դարպասն իր Մեմֆիսը բաց արեց իմ առջև,  
 Ամորի ցեղի գոռ Ամուն ցեղապետի  
 Մարմինը կիզեցի Մարդուկի կրակում,  
 Հող-փոշի դարձրեցի երկիրն Էլամիտի,  
 Կասսիտին խեղդեցի Եփրատի սահանքում:  
 Եվ լուլուբիացիք,  
 Խուրիտները նույնպես՝

Նույնիսկ քառապատիկ հարկ են բերում  
գահիս,

Ու Մարին իմ առջև պար է գալիս, ինչպես  
Ալեքուիս փրփուրով հոսքը Պարթեմիսի:

Սիրիան էլ սուր ճոճեց,

Բայց վահանը նրա

Փափուկ էր սրիս դեմ կալն ինչպես,

Դագոնին քանանցոց գահույթի հետ իրեն

Ճզմեցի ոտքիս տակ վերջապես:

Ա՛րդ, կողմում հյուսիսի,

Լեռներիս սառնաշունչ

Իշխում է Հաբեթի ցեղն ինքնագլուխ,

Եվ քաջ նետաձի՛գ է,

Ահե՛ղ է,

Ռազմաշո՛ւնչ...

Եփրատի հոսքով վար նրա մոլած մարդիկ

Բաբելոն են գալիս կլոր նավակներով՝

Վաճառում ազնիվ գինի, բուրդ՝ վառվող

կարմիր:

(Ներս է մտնում տարեց մի այր, գլխին՝ փաթթոց-խուլր: Չափավոր լայնությամբ ճերմակ պարեգոտի վրայից ունի թանկարժեք քարերով ու մարգարիտներով զարդարված թիկնոց, ոտքերին՝ սպիտակ մուկեր):

ԲԵԼ

Արթո՛ն...

Արթնամիտ ու ամենազոր

Մարդուկի հզոր պատգամավորին:

ԲԵՐՈՍՈՍ

Գուցե հեղակարծ է,

Սակայն աստվածային խորհուրդն ինձ

մղեց...

ԲԵԼ

Ի՞նչ խորհուրդ է, Բերո՛ս:

## ԲԵՐՈՍՈՍ

Սրտից Բաբելոնի բարձրչալիդ փառքը  
Հասավ տիեզերաց անհունին

աստեղնախիտ,

Հետայսու կքննես, ոչ միայն բազմախիտ  
Բարքը քաղդեացոց, նաև լուսնի վարքը:

**(Վեր կարկառած ձեռքերը իջեցնելով)**

Մեկնեմ՝

Քավդեար քրմերը մեր

Բարձր աշտարակից հզոր Մարդուկի

Զննեցին տվեցյան ու գիշեր.

Պարզեցին վարքը երկնաջահերի,

Արևի խավարումն ահաբեր,

Հզոր ընթացքը Մերկուրիի,

Թե որքան ժամում է լուսինը

Բոլորում պտույտի շրջանն իր:

## ԲԵԼ

Խորամիտ Բերոսոս հյուսիսում մեկը դեռ

Չի ծոռւմ իմ դէմ հպարտ գլուխը իր,  
Նրա երկիրը ես խոնարհեմ կոռքիս դէմ,  
Այա կանդրադառնամ լուսատուներին:  
**(Աջը տանելով ագռավաթույր մորուքը):**  
Հաբեթներին գիտե՛ս,  
Նաև նրա Հայկին՝ գոռոզ մի լեռնական,  
Որի մոլած մարդիկ Բաբելոն են գալիս՝  
Վաճառում ազնիվ գինի և կարմիր որդան:

## ԲԵՐՈՍՈՍ

Խորհուրդին հասու եմ,  
Սակայն ունայն բան է տիրելը խազմով.  
Փոքրիկ ցեղ է թեպետ,  
Բայց կարծր սրով  
Հատում է նույնիսկ բրոնզեղեն աշտեն,  
Ամենահաս նետով սփռում է զարհուր,  
Իսկ պայտերը նրա մրրիկ ձիերի՝  
Ինչպես կայծքարեր արձակում են հուր:  
Այլ է, եթե Հայկը

Անսա գերաշնորհ  
Խոսքդ, և հյուսիսը թողնի սառցապատիր,  
Մեղմի նաև ըմբոստ բնույթն իր չարախոհ  
Եվ խոնարհիվի անձիդ:  
Այնժամ, որտեղ ցանկա թող բնակվի ցեղով՝  
Աշշուրի մեջ, թեկուզ սրտում Բաբելոնի,  
Ջի գետերը մանրիկ որքան հոսեն հունով,  
Չուլվեն պիտի ծովի հզոր ալիքներին:  
**(Բեղը ուղղվում է տեղում):**

**ԲԵԼ**

Իսկ ի՞նչ կցուցանի բուրբակը լուսնի:

**ԲԵՐՈՍՈՍ**

Նրա վրա կարմիր բծեր երևացին.  
Դա իսկ հաղթությունն է՝  
Հավատի ու մտքի,  
Ձեռնարկումներ նաև՝ ի կատարում հույսի,  
Ապա անդորրություն՝ տանջող կրքերին:

ԲԵԼ

**(Ինքն իրեն)**

Արժանի զոհեր ես կմատուցեմ լուսնին,  
Մարդուկի բազնին՝ ողջակիզություն,  
Կկանգնեցնեմ սյուն մի սև քար Քասաբից,  
Որի մեջ տունն է Բեթել աստծու:

**(Բռունցքները սեղմում է ճակատին)**

Դիցամուկի մի բնույթ է ունայն  
Տրվել մոլեռանդ տենդին աղոթքի,  
Երկնի ու երկրի  
Գոյապե՛տն,  
Արքա՛ն  
Ապավինություն կուռքերի՛ց հայցի:

**(Ընդոստ դիմում է Բերոսոսին)**

Ծառագունումը մինչ պերճ արշալույսի՝  
Բաբելոնից դուրս գա Մոնթանուն ողջախոհ,  
Եվ դրանիկ որդիս՝ ուշիմ Պայասպին,  
Ու մեկնեն հյուսիս՝  
Երկիրն, ուր ապրում է Հայկն աղեղնավոր:

## ԲԵՐՈՍՈՍ

Սակայն աստվածային, ծեփին Այբուր-Շաբու  
Փողոցով պիտ ճեմի Մարդուկը վեհագույն՝  
Իր պերճ շքախմբով:

## ԲԵԼ

### (Ձեռքերը թափահարելով)

Կա՛մքս է ամենագոր,  
Մեկնեն երկիրը ցուրտ՝ Հայկի աղեղնավոր:

## ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ, ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Առավոտ է: Սյունապարդ շենքի միաթեք թա-  
ղակապ տանիքին արևահառ կանգնած են Առ-  
նակն ու Արփակնը նորապսակի հագուստով:  
Նրանց հետևում Համրամն է՝ ձեռքերը նորա-  
պսակների գլխին դրած: Իսկ առջևում Տար-  
բանը դեպի արևը մեկնած կրակի նշանը՝ խա-  
չը, աղոթում է երգեցիկ: Ներքևում շքեղաշուք  
հանդերձով կանգնած է Հայկը: Չորականներ  
և ժողովուրդ:

**ՏԱՐԲԱՆ**

**«Էգ, բարև, այ էգ, բարև,  
Էգն արևուն տանք բարև,  
Տա թագավորին շատ բարև»:**

**ԺՈՂՈՎՈՒՐԴ**

**«Վահե՛,  
Վահե՛»:**

**ՏԱՐԲԱՆ**

**«Էգ, բարև, այ էգ, բարև,  
Էգն արևուն տանք բարև,  
Տա թագուհուն շատ բարև»:**

**ԺՈՂՈՎՈՒՐԴ**

**«Վահե՛,  
Վահե՛»:**

(Տարբանը հանդիսաքայլ իջնում է  
աստիճաններով, և նրան հետևում են  
նորապապներն ու Համբարը: Նրանց  
առջև կանգնում են երեք փանդռահար  
գուսան):

#### Ա. ԳՈՒՍԱՆ

Բյուրեղից է Արփակնի թագը  
Նման ձյուններին սարերի,  
Մովից է զգեստը և Բագը,  
Գազպեն է ճերմակն այտերի:

#### Բ. ԳՈՒՍԱՆ

Արփակնի վարսերը շողերն են  
Տիեզերաց հրակն ակնի,  
Աչունքը Արփակնի ծովեր են,  
Սայրերը՝ Առնակի սակրի:

#### Գ. ԳՈՒՍԱՆ

Մեր երկինքն է Հայկ նահապետը,  
Արփակնը երկնի ակնը հուրհեր,

Առնակն էլ Արփակի ժպիտն է.  
Եվ Գրանց Բագինն է հողը մեր:

(Աղջիկները սուտ ճյուղերից գործած  
պսակներ են գցում անրապսակների  
պարանոցին: Շեփորահարություն:  
Ծնծղաների ու փանդիռների հնչյուն-  
ների տակ պարում է ժողովուրդը: Բակ  
է մտնում մի գորական):

### ԶՈՐԱԿԱՆ

Հայկաշեն են գալիս  
Բաբելական ընտիր տարազով աչրեր,  
Եվ գորականներ զինված, ասպարակիր:

(Լռում է երաժշտությունը: Զորական-  
ների սրերը մերկանում են: Ժողովուր-  
դը տազնապի մեջ է):

### ՀԱՅԿ

Բազմաբանա՞կ են Գրանք:

## ՉՈՐԱԿԱՆ

Զինակիրները շատ էլ չեն թվով.  
Մյուս երկուսն էլ այնպես վեհաճե՛մ...

## ՀԱՅԿ

Դեպքանություն է, բարով բարեհաճեն:

(Թիկնապահների ուղեկցությամբ բակ  
են մտնում բարեխական երկու դեպքան:  
Ավագ դեպքանը, որն առավել կարճա-  
հասակ է, եռաժանի մականի ոսկեգօծ  
ծայրերը վեր է բարձրացնում): .

## ԱՎԱԳ ԴԵՍՊԱՆ

Ողջուն տիեզերափայլ Նեքրովթ արքայից,  
Որ միահեծ տերն է շքեղ Բաբելոնի,  
Երկրի Սենաար,  
Ինչպես և Աշշուրի:

## ՀԱՅԿ

Հյուրը պատկանում է հզոր աստվածներին,  
Թե բարի է մտոք՝

Կանսամ խոհեմարար,  
Եվ կգոհացնեմ հշուրամեծությանք իմ:

### ԱՎԱԳ ԴԵՍՊԱՆ

Աստվածայնի կամոք՝  
Հեռավոր հշուսիս ենք եկել հույժ կարևոր  
Պատգամով երկնահաճ:

**(Թիկնապահներից մեկը թավշյա փաթ-  
թոցից հանում է կավե երկու պնակիս  
'և մեկնում ավագ դեսպանին: Վերջինս  
հանդիսավոր ու երգեցիկ կարդում է):**

### ԱՎԱԳ ԴԵՍՊԱՆ

Եվ դիմում է քեզ աստվածն հզորագույն,  
Ինքնակալը միակ, տերը միահեծան.  
Գիտցի՛ր, որ Նեբրովթից երկիւնքն՝ ինքն է  
սոսկում,  
Ինձնից չի վրիպում քարանձավ ու կածան:  
Գիտեմ, և կամքդ է կյանքդ մշտնջենի,

Մաշեղ լեռների ծերպերում սառնասառույց,  
Սակալն տաքացրու քո հպարտ բնույթի  
Սառնամանիքը ցուրտ,  
Ե՛կ, հնազանդվիր ինձ:  
Հետո տիրույթում իմ՝ երկիր Սենսաարում,  
Աշշուրում վեհաշուք՝ ինքդ ուր կհաճես,  
Թե ցանկաս՝ թեկուզ հեկց Բաբելոնի  
սրտում,  
Ցեղով քո, ինչքով ողջ բնակվիր տիրապես:  
Ապա թե ոչ, վկա բագիճը իմ ահեղ...

### ՀԱՅԿ

Պա՛րզ է միտումը արդ, թող որ լինի հեղեղ:  
(Հայկը տեղում ետ ու առաջ է անում:  
Լարված վիճակ է):

### ՀԱՄՐԱՄ

Մեր ուրախ գինին, արդար հացը մեր,  
Թունավորեցի՛ն... Օ, փրկի՛ր, արե՛գ:

## ԱՎԱԳ ԴԵՍՊԱՆ

Բայց Հայկ աղեղնավոր  
Ծարունակական է,  
Խոսքի վերջաբանին ընդհուպ դեռ չեմ  
հասել:

## ՀԱՅԿ

Համն զգում եմ նաև վերջաբանի նեո:

**(Ժողովուրդը ալիքվում է: Հայկը վրճ-  
ռական դիմում է բաբելական դեսպա-  
նությանը):**

Ասացե՛ք, Աշշուրա, և ձեր Մենասարի,  
Եվ ձեր Բաբելոնի հզոր տիրակալին.  
Ազատասեր Հայկը ձյունոտ լեռներից իր  
Անխարդավ կմնա,  
Եվ անդավ իր ցեղին:  
Ապա ասեք նաև  
Ձեր Նեբրովթ արքային՝

Իր անխորշ ~~ձգ~~տմանն ու մղումին  
փառատենչ,  
Անխեր կհետևի սպանդ մի սաստկալի:

### ԿՐՏՍԵՐ ԴԵՍՊԱՆ

Որպես կրթուեր որդին Աշուրա արքայի,  
Տիրակալի միակ,  
Որ բնույթով, ի դեպ  
Անողորք է դառնում ընդդեմ ըմբոստների,  
Մեծահոգի է և խոհեմների հանդեպ:

### ՀԱՅԿ

Ուշիմ ես, պատանցակ,  
Սակայն շատ ես ածու  
Քեզնից խելոքներին խորհուրդ տալու  
համար:

### (Դադար)

Ով էլ լինի թեկուզ,  
Երբ ավազի վրա

Կուրորեն վարում է իշխանությունը իր,  
Անշուշտ զոր հովից մի այն փոշի՝ կդառնա:

## **ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ, ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ**

Բեյի պալատը: Վերնամասի բարձրադիր  
հարթակի վրա ցլի ոտքեր պատկերող ոտնակ-  
նեղով և մարդկային կերպարանքներով փղոս-  
կրոյա գահն է: Գահավորակներին ընկողմա-  
նել են արքունապետ Բաբայը, Աբուալը և  
Պայասային: Մոնթանուն սղյուսե պևա՛ իտները  
ձեռքին սպասողական կանգնել է գա տւյքից  
քիչ հեռու:

Բելը ջղագրգիռ վիճակում է:

## **ԲԵԼ**

Եվ դո՛ւ, այպանելի՛, մերժում բերիր միայն:

**(Մոտենում է Մոնթանուին և աղյու-  
սաշերտերը վերցնում ու զարկում հա-  
տակին: Ներս է մտնում Բերոսոսը:  
Բելը, մատնացույց անելով աղյուսա-**

**շերտերի կտորտանքը, դիմում է Բերո-  
ստսին)։**

Ա՛յս էր քո նենգժոտ խորհրդի արդյունքը։

**ԲԵՐՈՍՈՍ**

**(Ձեռքերը վեր բարձրացնելով)**

Վկա սե՛ժ Մարդուկը...

**ԲԵԼ**

Արդ, չքվի՛ր խուցը քո, հանապազ

աղոթի՛ր,

Քանի դեռ ողջակեզ չես եղել բազմին իմ։

**(Ներկաները զգաստանում են։ Բերո-  
սոսը դանդաղաքալ դուրս է գնում։  
Բելը դիմում է արքունապետին)։**

Բարապ արքունապետ բնույթը քո գծի՛

Թոթափիր հոգուցդ օձաշապիկ որպես,

Նույնիսկ վերջին ոսկին իմ ճոխ գանձարանի

Չխնայես՝ կամքն է Բելի արարչն  
Իսկ դի՛ւ, Աբուալ, հորդ թագի վրասովին  
Փողեր հնչեցրու, հանուն գալիք գահիդ,  
Սահմաններում իմ ողջ սուրհանդակներ  
ճամփիդ,

Պետք է աստվածն իշխի սեմիտների ցեղի:  
Եվ իմ զինարանի դռները լա՛յն բացիր,  
Ոչ մի զինակոչիկ անգե՛ն շմա թող,  
Բաբաները պատրաստ.

Ամեն ճիզակակիր,

Ասպարակիր ամեն,

Ամեն սակրավոր

Իմանա թող, որ իր թիկունքում երկասյրի

Սուր կա պատրաստ, թե՛ ճա խնայի

անձն իր:

(Ներս է մտնում ոսկերչի զգեստով  
Նախտակահեր Նին-Խորսագը: Պաշաս-  
պին ընդառաջ է գնում: Նին-Խորսագը

ձեռքի կտրուկ շարժումով վանում է  
նրան):

### ՆԻՆ-ԽՈՐՍԱԳ

Ի՞նչ գույժ եմ լսում...

Ի սեր աստվածների,

Քեզ տրված է այն, քան չէր հասնում

կյանքից,

Չես բավարարվում ցեղով սեմիտների՞:

(Բելը մշուշված նայում է մորը: Պա-  
չասպին Նին-Խորսագին գրեթե գրկած  
նստեցնում է գահավորակներից մեկի  
վրա: Դրսում՝ աղաղակներ, զանգակ-  
ների ձայն, շեփորահարություն: Ներս  
է մտնում ամբողջովին գինավառ Դա-  
դարշիշը: Նա հոգնատանջ տեսք  
ունի):

## ԴԱԴԱՇԻՇ

Քաղղեայի հզոր և երկրի Աշշուր,  
Սենաար երկրի, նաև աքքաղների  
Տիրակալի կամոք՝  
Փշրեցի քանանցոց ընդվզող ոգին,  
Եվ ամբողջ գշուղեր ես փոշիացրի,  
Դարձրի մոխրակույտ ամեն մի քաղաք.  
Որպես ուզմատուգանք՝  
Սեմական գահին,  
Բերել եմ ես հարչուր ուղտաբեռ սպասք,  
Ոսկի, ազնիվ սարդիոն արչունատեսիլ,  
Սրեր, ապա վահաններ դրվագագեղ,  
Եվ բաբելոնյան մեր երկնակամարում  
Որքան հուրհրատի աստղեր կան անեղ,  
Այնքան ստրուկ եմ բերել ջղուտ ու տոկուն:

## ԲԵԼ

Հանուն սեմիտների աստծո հզորության՝  
Զրահեղեղ զորքդ պիտի զորաշարժես

Պեպի երկիրն հյուսիս.  
Լեռներն Հեպտոսթյան:

**ԴԱԴԱՐՇԻՇ  
(Հուզված)**

Հոգնատա՛նջ է գորթը,  
Թույլ տուր, որ տրվի փոքր գորադադար:

**ԲԵԼ**

Սեմիտ ցեղի հզոր արարչապետի  
Կամքն է անքակտելի:

**ՆԻՆ-ԽՈՐՍԱՆԳ**

Ջլատել է նրան պատերազմը Նեբրո՛վթ,  
Թույլ տուր քիչ շունչ առնի:

**ԲԵԼ**

Տիրակալը ես եմ տերունական գործի:

**Նին-Խորսանգ**

Հեպտոսթյան Հայկի մերժումից հարկավ  
Խոցված ես,

Սակաչն գազազմունքիդ մեջ էլ .  
Տիրազուրկ մի թողնի մղումներդ շար,  
Որ կբերեն անշուշտ երկրիդ մղձավանջ,  
Նաև կործանում՝ անձիդ տիեզերակալ:

ԲԵԼ

Աստվածն անվախճան է, անխոցելի նաև:

ԴԱԴԱՐՇԻՇ

Գալարափողը, երբ որոտաց խրոխտ,  
Մարտիկները մեր՝ խելակորույս ճեղեղ,  
Սասանեցին զորքը երկրի ընդվզող,  
Սակաչն ավազում խրված հրատող  
Բերդաքաղաքների պաշարման պահին  
Կիսով կորուստ տվինք զորականների:

ԲԵԼ

Ծարժվիր դեպի հյուսիս եղած զորականով,  
Մինչ ես կանապարեմ նոր զորակոչ  
զորքով:

## ԴԱԴԱՐՇԻՇ

Չեմ պարսավի նրանց, եթե թերանան,  
Զի չեն եղել երկչոտ,  
Տիրադավ նաև:  
Երբ օդը կիզող՝ հրամոխքի նման  
Մաղվում էր անխնա, ընդդիմակայելն  
Անհնարին դարձնում,  
Նրանք խելահեղ մահին էին հանձնում  
Անձն իրենց՝ սրտաքեր աղաղակներով:  
Չնչին մնացորդն էլ ավազուտներում՝  
Ետդարձի ճամփին, խորշակների միջով...

## ԲԵԼ

### (Բորբորված)

Զորականի հանդեպ հոր խնա՛մք կա քո մեջ,  
Սակայն գիտցի՛ր նաև  
Բազնիս հրին անշեջ՝  
Կնվիրաքերեմ զորապետր և նույնիսկ:

## ՆԻՆ-ԽՈՐՍԱՆՔ

(Գրեթե խելակորույս)

Պաղարշի՛շ,  
Որդի՛ս...

## ԴԱԴԱՐՇԻՇ

(Առաջանալով դեպի մայրը)

Ամեն զորագլուխ հոգալ պարտավոր է  
Իր զորականի թեկուզ հողատապով:

## ԲԵԼ

Անշուշտ, մի զորական,  
Չնչի՛ն նիզակակիր՝  
Թա՛նկ է հզորագույն գահից տիրակալիդ:

## ԴԱԴԱՐՇԻՇ

(Բռնելով մոր դողդոջ ձեռքը):

Քահը հզոր է զորականի՛ սրով:

ԲԵԼ

**(Ինքնամոռաց)**

Կիզե՛լ բագնիս հրով...

(Մուտքի մոտ պահակող մի խումբ սակրավորներ մոտենում են Դադարշիշին: Դադարշիշը սրամերկ ընդանաջ է գնում: Վերջիններս ընկրկում են):

**ԴԱԴԱՐՇԻՇ**

**(Թեք նայելով)**

Ներքովթն հայտնի է

Վարքով քմայական.

Բարձակից կդարձնի ստորինի՛ն նույնիսկ,

Եվ հաջորդ պահին կկառաիի՛ նրան:

(Սուրը պատյանում է, և ձեռքերը հետևին դրած հանդիսաքայլ դուրս է գնում: Նրան հետևում են սակրավորները: Նին-Խորսագը ուշաթափվում է):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ստվերներ և լույս

Խոհեղիս գուպոլ ակունքը խորին . . . . .	3
Թվում է արդեն . . . . .	5
Մի անջափ երկինք . . . . .	6
Անքնություն . . . . .	7
Հոգեվարք և հարություն . . . . .	9
Լուսամիտփիս կապույտ . . . . .	12
Հողը վայրի էր . . . . .	14
Թեթև էր այնպես . . . . .	17
Իմ աշխարհը . . . . .	18
Էհ, ի՞նչ արած . . . . .	20
Լույսն արեգական . . . . .	21
Ինքնապատում . . . . .	23
Եվ մենակյացի տառապանքի պես . . . . .	26
Ի խորոգ լռության . . . . .	28
Չրույց սրտիս հետ . . . . .	29
Աչքս չի տեսնում կյանքիս կորուստը . . . . .	31
Իրողություն է . . . . .	32
Տապանագիր . . . . .	33
Խոստովանություն . . . . .	34
Մռայլ ամպերը, անտուն ու թափառ . . . . .	36
Ես քավդեար չեմ . . . . .	37
Գայթակղում . . . . .	39

Անկարելի՞ն	40
Հանձնվիր հրին ողջակիզության	42
Ինչպես գալիքի երազատենդով	43
Հոգեվարք մի հուսախառքի	45
Տեսե՞լ ես մահը	46
Օ, ցրի՞ր տագնապները հոգուդ	48
Գիշերվա մութով	49
Չարմանալի է	50

### Առանց շշուկի

Մատներիդ նման	51
Մտերմություն	52
Աչքի կոպին	54
Մի՞թե քեզ գտա	54
Խաբվածք	55
Այնպես նստել է	56
Պատրանք	58
Հավատս	59
Ինքնամոռացման իմ կարճ գիշերներ	60
Դու գնո՞ւմ ես	61

### Ծավալվող կաավ

Հավերժի վկան	62
Բեմ առանց վարագույրի	78
Հայկ Նահապետ (հատվածներ դրամալից)	105

Միսաք Մկրտչի Հովենց  
ԼԵՌԱՆ ՍԱՐՍՈՒՌԸ

(Բանաստեղծություններ և պոեմներ)

Мисак Мкртичович Овенц, СОДРОГАННИЕ ГО-  
РЫ, (Стихи и поэмы), (На армянском языке).  
Издательство «Советакан грох», Ереван — 1981  
Խմբագիր՝ Ս. Վ. Դավոյան, նկարիչ՝ Ան. Վ. Գուսպար-  
յան, գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան, տեխ. խմբ-  
ագիր՝ Ա. Յ. Կովկասյան, վերատուգող սրբագրիչ՝  
Վ. Դ. Աղատյան:

ԻԲ. 327Զ

Հանձնված է շարվածքի 01. 06. 81: Ստորագրված է  
տպագրության 15.07.81: ՎՖ 07067: Ֆորմատ 84×  
108<sup>1</sup>/<sub>64</sub>: Թուղթ տպագրական № 1: Տառատեսակ՝  
«Նորք»: Տպագրությունը՝ բարձր: 3,99 պայմ. տպ.,  
մամ. 3,2 հրատ. մամ. + 1 ներդիր: Տպաքանակ 3000:  
Պատվեր 977: Գինը՝ 50 կոպ.: «Սովետական «գրող»  
հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91: Изд во  
«Советакан грох», Ереван-9, ул Теряна, 91. ՀՍՍՀ  
հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի  
առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան:  
Երևան, Թումանյան փողոց № 23/1: Типография  
№ 6, Госкомитета по делам издательств, поли-  
графии и книжной торговли Арм ССР Ереван,  
ул. Туманяна, 23/1.

